ԵՆԹԱԴՐՅԱԼ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Բովանդակություն....2

Ներածություն....4

Մեթոդաբանություն....5

Երկրորդային տվյալների հետազոտություն....7

Խտրականություն. միջազգային ու ներպետական իրավական ակտերի ուսումնասիրություն....7

Անուղղակի խտրականություն....8

Եվրոպական դատարանի նախադեպերը անուղղակի խտրականության գործերով....9

ՀՀ Սահմանադրություն....11

«Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծ....12

ՀՀ քրեական օրենսգիրք....13

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և ԸԲ վերաբերյան իրավական ակտերի ուսումնասիրություն....15

Պեկինի հռչակագիր....15

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա....17

ԵԽ Կոնվենցիայի նկատմամբ ՀՀ վերապահումներից փոխհատուցման տրամադրումը....17

Անուղղակի խտրականության բացառումը Կոնվենցիայով....18

ՀՀ օրենքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»....20

Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023, 2024-2028 թվականների ռազմավարություններ....20

Ընտանիքում բռնության դեմ պայքարի 2023-2025 թթ. ռազմավարության նախագիծ....21

ՀՀ օրենքը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին»....22

ԸԲ օրենքի փոփոխությունները....22

ՍԴՈ-1522 Որոշում....24

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք....25

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության վերաբերյալ միջազգային կարգավորումներ....25

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հհ քրեական օրենսգրքի դրույթների վերլուծություն....28

«ՀՀ փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագիծ....34

Արձանագրված խնդիրներ եվ եզրակացություններ 37
Կանանց իրավունքներ 37
Զինծառայողների իրավունքներ 39
Առաջարկություններ 40
Կանանց իրավունքներ 40
Զինծառայողների իրավունքներ 41
Որակական հետազոտություն 42
Ընտանեկան բռնության դեպքերով վարույթներ 42
Դատական տեղեկատվական համակարգ՝ datalex.am 42
Ընտանեկան բռնության դեպքերով քրեական վարույթների ուսումնասիրություն 43
Ընտանեկան բռնության դեպքերով վարչական վարույթները 49
ՀՀ վարչական դատարանների իրավական դիրքորոշումները և դրանց ուսումնասիրության արդյունքները 51
Հարցումներ ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ 58
Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով քրեական վարույթներ 60
Արձանագրված խնդիրներ եվ եզրակացություններ 66
Կանանց իրավունքներ 66
Զինծառայողների իրավունքներ 68
Առաջարկություններ 69
Կանանց իրավունքներ 69
Զինծառայողների իրավունքներ 71
Հավելվածներ 73
Հավելված 1 73
Հավելված 2 75
Հապավումներ 78

Ներածություն

«Ենթադրյալ անուղղակի խտրականություն խոցելի խմբերի հանդեպ» հետազոտությունը իրականացվել է «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» աջակցությամբ:

Հետազոտության հիմնական նպատակն է վեր հանել ընտրված երկու խոցելի խմբերի՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց և զինվորական ծառայողների գործերով ենթադրյալ խտրականության դրսևորումները, անուղղակի խտրականության երևույթները՝ վեր հանելով արմատավորված քաղաքականության, դատական պրակտիկայի խնդիրները, վերլուծել դրանք և առաջարկություններ ներկայացնել համապատասխան մարմիններին:

Հետազոտությունն իրականացվել է 2024թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին ներառելով՝

1. **Երկրորդային տեղեկատվության ուսումնասիրություն desk research միջոցով՝**

- Միջազգային և ներպետական իրավական դաշտի՝ վերաբերելի կարգավորումներ, ՄԻԵԴ-ի նախադեպեր,
- ենթաօրենսդրական ակտեր,
- ռազմավարություններ, նախաձեռնություններ, գործողությունների ծրագրեր:

2. **Որակական հետազոտություն.**

- Վարչական և քրեական ակտերի ուսումնասիրություն
- Բաց ռեսուրսների, պաշտոնական կայքերի ուսումնասիրություն
- Հարցաթերթիկի մշակում, անցկացում, վերլուծություն

Հետազոտական աշխատանքները բաժանվել են երեք փուլի՝

1. նախապատրաստական,
2. դաշտային աշխատանքներ՝ տեղեկատվության հավաքագրում,
3. տվյալների վերլուծություն և մշակում:

Հետազոտության նախապատրաստական փուլը ներառել է՝

- datalex.am համակարգից դատական գործերի առանձնացում, ընտրություն /քրեական և վարչական/
- Բաց ինֆորմացիոն ռեսուրսների/պաշտոնական վերաբերելի կայքերի ընտրություն
- Հարցաթերթիկի մշակում
- Հարցման մասնակիցների ընտրություն
- Գործընկեր կառույցների հետ համագործակցություն

Հետազոտության դաշտային աշխատանքները ներառել են՝

- իրավական դաշտի և ՄԻԵԴ-ի նախադեպերի ուսումնասիրություններ,
- պաշտոնական կայքերի ուսումնասիրություն,

- քրեական ու վարչական շուրջ 80 վարույթների/ակտերի ուսումնասիրություն,
- ընտանեկան բռնության ենթարկված 10 կանանց հետ հարցումների անցկացում, /«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ շահառուներ/:

Հետազոտության տվյալների մշակումը և վերլուծությունը ներառել է՝

- հավաքված տեղեկատվության մշակում,
- ստացված տվյալների ու տեղեկատվության վերլուծություն,
- վեր հանված խնդիրների արձանագրում,
- եզրակացությունների ու առաջարկությունների կազմում:

Մեթոդաբանություն

Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է խառը մեթոդների մոտեցման վրա. համատեղվել են առաջնային տվյալների հավաքագրման մեթոդները՝ հետազոտության խնդիրները պարզելու և տվյալների հավաքագրման մեթոդների համադրումն ապահովելու համար: Հետազոտության շրջանակում օգտագործվել են datalex.am դատական տեղեկատվական համակարգից ընտրված վարչական և քրեական գործերը, դրանց վերլուծությունը:

Հետազոտության առաջին փուլը ներառել է desk research (DR), որը կառուցվել է երկրորդային տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանությամբ՝ բացահայտելու ոլորտին վերաբերվող միջազգային ու ներպետական իրավակարգավորումների ու դրանց կիրառման առանձնահատկությունները: Բացի այդ, ուսումնասիրվել են օրենսդրական ակտեր, իրավական փաստաթղթեր և այլ տեղեկատվություն, որն առնչվում է ընտանեկան բռնության դեպքերով և զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատական պրակտիկային, տվյալների հավաքագրմանն ու վերլուծության գործիքներին:

Երկրորդային տվյալների ուսումնասիրությունը կատարվել է՝

- միջազգային ու ներպետական համապատասխան իրավական մեխանիզմների, ՄԻԵԴ նախադեպերի
- ոլորտային ռազմավարության, գործողությունների ծրագրերի վերլուծության միջոցով:

Ըստ այդմ՝ ուսումնասիրվել են հետևյալ իրավական ակտերը և փաստաթղթերը

- ՀՀ Սահմանադրություն,
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,
- «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա,
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր,
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա,

- **«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա,**
- Պեկինի հռչակագիր,
- «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա,
- ՀՀ քրեական օրենսգիրք,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև օրենքի 2024թ. փոփոխություններ և լրացումներ. ուժի մեջ են մտել 2024թ. հուլիսի 1-ից,
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք /2013թ./,
- Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023, 2024-2028 թվականների ռազմավարությունները և գործողությունների ծրագրեր,
- **Ընտանիքում բռնության դեմ պայքարի 2023-2025 թթ. ռազմավարության նախագիծ**
- ՍԴՈ-1522 որոշումը,
- «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծ
- «ՀՀ փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- ՄԻԵԴ-ի նախադեպեր անուղղակի խտրականության վերաբերյալ

Հետազոտության հաջորդ փուլը ներառել է datalex.am դատական տեղեկատվական համակարգից վարչական և քրեական գործերի ընտրությունն ու առանձնացումը:

Ընտանեկան բռնության դեպքերով ընտրվել է գործերի քննության 2021-2024թթ. ժամանակային միջակայք: Ըստ այդմ՝ ուսումնասիրվել է

- 25 քրեական վարույթ /դատական ակտեր/
- 20 վարչական վարույթ /դատական ակտեր/

Զինվորական գործերով ընտրվել է գործերի քննության 2008-2024թթ. միջակայք: Ըստ այդմ՝ ուսումնասիրվել է

- 28 քրեական վարույթով դատական ակտեր
- 5 քրեական վարույթ /3-ը ինքնասպանության հասցնելու, 2-ը՝ դժբախտ պատահարի վերաբերյալ/

Տեղեկատվության հավաքագրման փուլի ավարտին հաջորդել է տվյալների վերլուծության փուլը, որի միջոցով ամփոփվել են արդյունքները, կատարվել են եզրակացությունները, մշակվել առաջարկները, ապա կազմվել է վերջնական հետազոտական հաշվետվությունը:

Երկրորդային տվյալների հետազոտություն

Երկրորդային տեղեկատվության հետազոտությունն իրականացվել է desk research-ի միջոցով: Ուսումնասիրվել են իրավական միջազգային ու ներպետական փաստաթղթեր, պայմանագրեր, ռազմավարություններ, օրենքների նախագծեր, ՄԻԵԴ-ի նախադեպեր, բաց ռեսուրսներ:

Խտրականություն. միջազգային ու ներպետական իրավական ակտերի ուսումնասիրություն

Խտրականությունը իրավունքի, սոցիալական կամ տնտեսական ոլորտներում անհավասար վերաբերմունքն է, որը հիմնված է անձի առանձնահատկությունների վրա, ինչպիսիք են՝ ռասան, ազգությունը, սեռը, ծերությունը, մտավոր կամ ֆիզիկական ունակությունները, սեռական կողմնորոշումը, կրոնը կամ սոցիալական կարգավիճակը:

Խտրականության վերացման միջազգային պարտավորությունները լայն շրջանակ ունեն. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (Հոդված 7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (Հոդված 26) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (Հոդված 2 կետ 2), ի թիվս այլոց, անդրադառնում են խտրականության բացառման սկզբունքին:

Հայաստանի կողմից վավերացված այլ, խտրականության բացառմանն ուղղված պայմանագրերից և կոնվենցիաներից են նաև «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ կոնվենցիան, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների» ՄԱԿ-ի կոնվենցիան, Երեխայի իրավունքների կոնվենցիան (Հոդված 2):

Խտրականության բացառման, իրավահավասարության ապահովման և պաշտպանության մասին օրենքներ գոյություն ունեն աշխարհի շատ երկրներում: Դրանց նպատակները ներառում են պաշտպանության լայն սպեկտոր՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունից մինչև հնարավորությունների հավասարության ապահովում: Ահա մի քանի երկրների օրինակներ, որտեղ նման օրենքներ կան.

Միացյալ Նահանգներ - Դաշնային օրենքները, ինչպիսիք են 1964 թվականի Քաղաքացիական իրավունքների մասին օրենքը, պաշտպանում են ռասայի, մաշկի գույնի, կրոնի, սեռի և ազգային ծագման վրա հիմնված խտրականությունից: Կան նաև զբաղվածության հավասար հնարավորությունների մասին օրենքներ և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանող օրենքներ:

Կանադա - Կանադայի Մարդու իրավունքների ակտը և նահանգային օրենքները պաշտպանում են խտրականությունից տարբեր հիմքերով՝ ներառյալ ռասայական, սեռը, կրոնը և սեռական կողմնորոշումը:

Մեծ Բրիտանիա - 2010 թվականի Հավասարության մասին օրենքը արգելում է խտրականությունը բազմաթիվ հիմքերով՝ ներառյալ տարիքը, հաշմանդամությունը, ռասայական, կրոնը և սեռը:

Ավստրալիա - Հավասար հնարավորությունների մասին օրենսդրությունը, ինչպիսին է Աշխատանքային իրավունքի մասին օրենքը, պաշտպանում է քաղաքացիների իրավունքները ռասայական, սեռային, հաշմանդամության և այլ հիմքերով խտրականությունից:

Ֆրանսիա - Հավասարության մասին օրենքները և հակախտրական միջոցառումները պաշտպանում են խտրականությունից տարբեր հիմքերով, ներառյալ սեռը, ծագումը և հաշմանդամությունը:

Գերմանիա - Ընդհանուր իրավահավասարության մասին օրենքը (Allgemeines Gleichbehandlungsgesetz) պաշտպանում է աշխատանքային հարաբերություններում և կյանքի այլ ոլորտներում խտրականությունից:

Շվեդիա - Հավասարության մասին օրենքները պաշտպանում են խտրականությունից տարբեր հիմքերով, ներառյալ սեռը, ռասայական և սեռական կողմնորոշումը:

Անուղղակի խտրականություն

Անուղղակի խտրականությունը մի իրավիճակ է, երբ թվացյալ չեզոք կանոնները, գործելակերպերը կամ նորմերը բացասաբար են ազդում մարդկանց որոշակի խմբերի վրա՝ առանց նրանց նկատմամբ խտրականության մտադրության: Նման գործելաոճը կարող է հանգեցնել անհավասար վերաբերմունքի և դժվարությունների որոշ կատեգորիաների քաղաքացիների համար:

Ըստ այդմ, անուղղակի խտրականությունն առերևույթ չեզոք գործողություն, անգործություն, կարգավորում, վերաբերմունք կամ քաղաքականություն է, որը պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի հիմքով անհամաչափորեն անբարենպաստ է ազդում անձանց խմբի վրա:

Անուղղակի խտրականությունը ուղղակի խտրականությունից տարբերվում է նրանով, որ կիրառվում է ոչ թե կոնկրետ անձի, այլ որոշակի խմբի նկատմամբ և տվյալ անձին կարող է առնչվել առերևույթ չեզոք կերպով: Անուղղակի խտրականություն կարող է համարվել օրենքը, քաղաքականությունը, պայմանը, գործողությունը, անգործությունը, պրակտիկան, որոնց կիրառման դեպքում կոնկրետ անձը կամ անձանց խումբը զրկվում է որոշակի իրավունքներից կամ արտոնություններից[1]: Անուղղակի խտրականությունը մի իրավիճակ է, երբ թվացյալ չեզոք օրենքները կամ գործելակերպերը, որոնք բացահայտ խտրականություն չեն դնում, իրականում բացասաբար են ազդում մարդկանց մի խմբի վրա (օրինակ՝ ելնելով սեռից, ռասայից, տարիքից և այլն): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր պրակտիկայում դիտարկել է այն դեպքերը, երբ, չնայած բացահայտ խտրականության բացակայությանը, օրենքները կամ պետական գործողությունները հանգեցրել են անհավասար վերաբերմունքի կամ որոշակի խմբերի իրավունքների ոտնահարման, ինչը խախտում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը: Մարդու իրավունքների կոնվենցիա (խտրականության արգելում):

[1] «Իրավական պաշտպանության եղանակները» ձեռնարկ, 2015թ., էջ 23

Ներպետական օրենսդրությունում «անուղղակի խտրականություն» եզրույթը սահմանված է *«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»* ՀՀ օրենքում (3-րդ հոդվածի 2-րդ մաս, 6-րդ հոդվածի 3-րդ մաս) և «Կուսակցությունների մասին» օրենքի 3(2) հոդվածում:

Անուղղակի խտրականությունը ընդգծում է չափանիշների և գործելակերպի քննադատական քննության կարևորությունը՝ երաշխավորելու, որ դրանք իսկապես արդար են և խոչընդոտներ չեն ստեղծում մարդկանց որոշակի խմբերի համար:

Եվրոպական դատարանի նախադեպերը անուղղակի խտրականության գործերով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ թվացյալ չեզոք օրենսդրությունը կամ գործելակերպը անհամաչափ ազդեցություն են ունենում մարդկանց որոշ խմբերի վրա: Դատարանի դիրքորոշմամբ, եթե նման միջոցները անհամաչափ բացասական ազդեցություն ունեն խմբերից մեկի վրա (օրինակ՝ ռասայական, սեռային, էթնիկ պատկանելության և այլնի հիման վրա), ապա դա կարող է համարվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում:

- **«Ս.Ա.Ս. ընդդեմ Ֆրանսիայի» (2014) գործով** բողոքաբեր կինը պնդում էր, որ Ֆրանսիայում օրենսդրական փոփոխությամբ բուրկինի կրելու արգելքը (կանանց համար մեկ կտոր լողազգեստներ, որոնք ծածկում են մարմինը՝ բաց թողնելով միայն դեմքը, ձեռքերն ու ոտքերը) հանգեցնում է անուղղակի խտրականության մուսուլման կանանց հանդեպ: ՄԻԵԴ որոշմամբ, որ թեև օրենքը հատուկ չի վերաբերում մուսուլման կանանց, դրա կիրառումը իրականում անուղղակի ազդեցություն է ունենում իսլամական հագուստի ավանդույթները պահպանող կանանց վրա: Դատարանը նշել է, որ ֆրանսիական օրենսդրությունը չի ապահովում բուրկինիի արգելքի համար բավարար անհրաժեշտություն և համաչափություն, ինչը հանգեցրել է խտրականության կանանց նկատմամբ, ովքեր ցանկանում են կրել այս տեսակի լողազգեստ կրոնական կամ մշակութային նկատառումներով:
- **«Թարախելն ընդդեմ Շվեյցարիայի» (2014) գործով** բողոքը վերաբերում էր ընտանեկան միգրանտներին, որոնց մերժել էին ապաստան տրամադրել՝ չնայած նրանց խոցելիությանը: Թեև շվեյցարական օրենքները նախատեսում էին միգրանտների ընդունելություն, գործնականում դրանք հաճախ հաշվի չէին առնում ընտանիքների հատուկ կարիքները, ինչի հետևանքով կանայք և երեխաները էլ խոցելի էին դառնում՝ չստանալով պաշտպանություն: ՄԻԵԴ ճանաչեց, որ թեև օրենքներն ու ընթացակարգերը պաշտոնապես չեզոք էին, միգրանտների նկատմամբ դրանց կիրառումը հանգեցրել էր անուղղակի խտրականության կանանց և երեխաների նկատմամբ, քանի որ նրանք ավելի խոցելի էին դարձել: ՄԻԵԴ-ը նշել է, որ ստանդարտ ընթացակարգեր կիրառելիս պետությունները պետք է հաշվի առնեն մարդկանց որոշակի կատեգորիաների, օրինակ՝ կանանց և երեխաների խոցելիությունը:

Ընտանեկան բռնության գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հաճախ ուսումնասիրում է, թե ինչպես են պետությունները պաշտպանում բռնության զոհերին և ստուգում, թե արդյոք օրենսդրությունը կամ պրակտիկան հանգեցնում է անուղղակի խտրականության, հատկապես գենդերային հիմքով: Ընտանեկան բռնության համատեքստում անուղղակի խտրականություն կարող է առաջանալ, երբ, չնայած ընդհանուր օրենքների առկայությանը, բռնության զոհերի (սովորաբար կանանց) պաշտպանությունը անբավարար է սոցիալական, մշակութային և իրավական հանգամանքներից ելնելով:

Այս համատեքստում բերված են մի քանի նախադեպեր, որտեղ ՄԻԵԴ-ը ճանաչել է ընտանեկան բռնության հետ կապված անուղղակի խտրականության առկայությունը:

- **«Օփուզն ընդդեմ Թուրքիայի» (2009) գործով** Դիմումատուն՝ մի կին էր, ով Թուրքիայում բռնության էր ենթարկվել իր ամուսնու կողմից: Նա պնդել էր, որ իշխանությունները չեն ապահովել իրեն բռնությունից համապատասխան պաշտպանություն: Կինը մի քանի անգամ բողոք էր ներկայացրել ոստիկանություն, սակայն իրավապահ մարմինները բավարար միջոցներ չէին ձեռնարկել նրա անվտանգությունը պաշտպանելու համար: ՄԻԵԴ-ը ճանաչել էր ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածի (խտրականության արգելք) խախտում՝ 3-րդ հոդվածի (խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելում) հետ միասին՝ նշելով, որ ընտանեկան բռնության դեպքերում, եթե պետությունը բավարար միջոցներ չի ձեռնարկում կանանց պաշտպանության համար, ապա դա հանգեցնում է անուղղակի խտրականության: Դատարանն արձանագրել էր, որ կանանց բռնությունից պաշտպանելու և նման հանցագործություններին արդյունավետ արձագանքելու պետությունների ձախողումը նպաստում են կանանց ճնշմանը և ոտնահարում են նրանց իրավունքները: Այս որոշումը դարձել է հիմնաքարային նախադեպ, որը հաստատել է պետական համարժեք միջոցների անհրաժեշտությունը ընտանեկան բռնության դեմ պայքարի և զոհերի, հատկապես կանանց պաշտպանության համար:
- **«Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (1998) գործը** վերաբերում է մի կնոջ, ով ամուսնու կողմից ենթարկվել էր ընտանեկան բռնության: Նա դիմել էր ոստիկանություն և դատարան, սակայն իշխանությունների գործողությունները արդյունավետ պաշտպանության չէին հանգեցրել: Մասնավորապես, ոստիկանությունը չէր կարողացել պատշաճ կերպով հետաքննել բռնության պարբերական դեպքերը, իսկ կինը շարունակել էր սպառնալիքներ ստանալ: ՄԻԵԴ-ը գտել է, որ տվյալ դեպքում բրիտանական իշխանությունների գործողությունները խախտում են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 14-րդ հոդվածները: Դատարանը մատնանշել է կանանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու իշխանությունների ձեռնարկած միջոցառումների անբավարար արդյունավետությունը: Դատարանի դիրքորոշմամբ, նման մոտեցումը կարող է համարվել անուղղակի խտրականություն, քանի որ կանայք են ամենից հաճախ ընտանեկան բռնության զոհ դառնում, և պետությունները պետք է հատուկ միջոցներ ձեռնարկեն՝ պաշտպանելու նրանց իրավունքները և անվտանգությունը:
- **«Բևաքվան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի» (2008) գործով** Դիմումատուն դիմել է ՄԻԵԴ՝ բողոքելով, որ Բուլղարիայի իշխանությունները միջոցներ չեն ձեռնարկել իրեն նախկին զուգընկերոջ կողմից կատարված բռնությունից իրեն պաշտպանելու համար: Չնայած այն հանգամանքին, որ նա մի քանի անգամ դիմել է ոստիկանություն, եղել են միայն ժամանակավոր պաշտպանական միջոցներ, որոնք չեն ապահովել նրա անվտանգությունը: ՄԻԵԴ-ը ճանաչել է 3-րդ հոդվածի (խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելում) և 14-րդ հոդվածի (խտրականության արգելում) խախտում: Դատարանն ընդգծել է, որ այս գործում Բուլղարիայի գործողությունները կանանց նկատմամբ անուղղակի խտրականության օրինակ են, քանի որ իրականում իշխանությունների ձեռնարկած միջոցները համապատասխան պաշտպանություն չեն ապահովում բռնությունից:
- **«Թ.Մ. և Ք.Մ. ընդդեմ Մոլդովայի» (2014) գործը** վերաբերում է երկու կանանց բողոքին, որոնք ընտանեկան բռնության զոհ են դարձել, սակայն Մոլդովայի իշխանությունների կողմից համապատասխան պաշտպանություն չեն ստացել: Կանայք նշել են, որ իրավապահները բավարար միջոցներ չեն ձեռնարկել բռնությունը կանխելու կամ արդյունավետ

հետաքննություն ապահովելու համար: Բացի այդ, նրանք պնդել են, որ չկան բավարար մեխանիզմներ կանանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար: ՄԻԵԴ-ը այս գործով նույնպես ճանաչել է 3-րդ հոդվածի (խոշտանգումների և դաժան վերաբերմունքի արգելում)՝ 14-րդ հոդվածի (խտրականության արգելում) խախտում: Դատարանը նշել է, որ Մոլդովայի իշխանությունները չեն տրամադրել համապատասխան պաշտպանություն ընտանեկան բռնության զոհերին, ինչը անուղղակի խտրականություն է կանանց նկատմամբ, քանի որ նրանք ավելի խոցելի են և հավանական է, որ ենթարկվեն պարբերական ընտանեկան բռնության:

ՀՀ Սահմանադրություն

Մայր օրենքով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք[2]:



Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

Օրենքի առջև հավասարության ու խտրականության արգելքի սկզբունքները ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ ու մարդու իրավունքների մի շարք միջազգային փաստաթղթերով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները սահմանում են բոլորի հավասարությունն օրենքի առջև, խտրականության համընդհանուր արգելքը և կանանց ու տղամարդկանց իրավահավասարությունը:

ՀՀ մայր օրենքով հռչակված է կանանց և տղամարդկանց իրավահավասարություն[3] և պետությունն է այդ իրավահավասարության երաշխավորը: Մեր պետությունը ստանձնել է այդ իրավունքի անարգել իրացումն ապահովող երաշխիքների ստեղծման պոզիտիվ պարտավորություն միջազգային փաստաթղթերով, այդ թվում նաև՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով:

Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ ենթակետով՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից է «4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը», ինչը հնարավորություն է տալիս առավել գործուն մեխանիզմներ ներդնել քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակման մեջ: Սահմանադրության 29-րդ

[2] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[3] Ըստ ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի՝ «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»

հոդվածը երաշխավորում է խտրականության արգելքի, խտրական վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը. Ըստ այդմ՝ արգելվում է «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից»: Բացի այդ, Սահմանադրությունը երաշխավորում է խոշտանգումներից և վատ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը որպես բացարձակ իրավունք է, այն որևէ կերպ չի սահմանափակվում:

«Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծ

Հայաստանը դեռևս չունի համապարփակ օրենք խտրականության բացառման մասին: Օրենքի առաջին նախագիծը մշակվել է 2012-ին՝ ՄԻՊ գրասենյակի կողմից[4], ապա 2018-ին, որը մի քանի անգամ լրամշակվել է: 2018 թվականին մշակված «Իրավահավասարության ապահովման մասին» վերտառությամբ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ստացված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագիտական կարծիքում ներկայացված առաջարկությունների մեծ մասը ներառվել է 2024 թվականին լրամշակված նախագծում[5]: Լրամշակված Նախագիծը 2023թ. հուլիսին ներկայացվել է ԵԽ փորձագիտիկան կարծիքի, որի հաշվառմամբ նախագիծը լրամշակվել է՝ վերջինիս տալով ավելի լայն և ընդգրկուն վերտառություն՝ «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենք:

Խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի ընդունման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ԵԽ-ի Մարդու իրավունքների հանձնակատարի, ԱՄՆ Պետքարտուղարության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Օգանեզովան ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարման շրջանակներում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կոչ է արել ՀՀ իշխանություններին անհապաղ ավարտին հասցնել իրավահավասարության օրենքի նախագծի մշակման գործընթացը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, և ընդունել նշված օրենքն առանց ձգձգումների:[6]

Նախագծին հարակից՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածում փոփոխությունների կատարում: Կատարված փոփոխություններով, մասնավորապես, առաջարկվում է՝

1) խտրականության համար քրեական պատասխանատվություն նախատեսել միայն պաշտոնատար անձանց կողմից խտրականություն գործելու դեպքերում,

---

[4] Տե՛ս հղմամբ https://www.csi.am/hy/events/2012/11/24/discrimination

[5] Նախագիծն ու հիմնավորումներն ամբողջությամբ https://www.e-draft.am/projects/7408/about

[6] ԵԽ նախարարների կոմիտեի 2023 թվականի հունիսի 7-ի թիվ CM/Del/Dec(2023)1468/H46-1 որոշումը, հասանելի է https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=0900001680ab57e5 հղումով:

2) նեղացնել գործող օրենսգրքում առկա հանցակազմի օբյեկտիվ կողմը: Այսպես, նախագծով առաջարկվում է պատասխանատվություն նախատեսել միայն ուղղակի խտրականության համար այն դեպքում, երբ այդ խտրականությունը հանգեցրել է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների կամ ազատությունների ոտնահարմանը,

3) մեղմացնել գործող օրենսգրքով նախատեսված պատժատեսակները՝ բացառելով խտրականության համար ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների նշանակումը:

Նախագծին հարակից՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է վարչական պատասխանատվություն նախատեսել ուղղակի խտրականության ավելի մեղմ դրսևորումների, ինչպես նաև վիկտիմիզացիայի և ոտնձգության (harassment) համար:

ՀՀ քրեական օրենսգիրք

ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որը ուժի մեջ է մտնել 2022թ.-ի հուլիսի 1-ից, որպես հանցակազմերի ծանրացնող հիմք ներառվել է «մերձավոր ազգականի» կողմից կատարված հանցագործությունը, որը սահմանված է Օրենսգրքի հոդված 3-ի 18-րդ կետով որպես՝ «անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը»:

Այսպիսով՝ քրեական օրենսգրքով փորձ է կատարվել օրենսգրքով մերձավոր ազգական հատուկ սուբյեկտի պատժի ու պատասխանատվության ներքո արտացոլել ընտանեկան բռնության կոնցեպտը, սակայն այն լիարժեք չի արտացոլում ընտանեկան բռնության ողջ սպեկտորը, քանի որ հիշյալ ծանրացնող հիմքով այսօր կարող են դատապարտվել նաև երկու եղբայրներ, ովքեր ծեծկռտուքի են բռնվել ավտոտնակը կիսելու համար: Սակայն այս պարագայում բացակայում է ԸԲ ուժի և վերահսկողության հայտնի անիվի հայեցակարգը:

Միջազգային՝ ԵԽ փորձագետ Լորի Մանն, օրինակ, ՀՀ ներկայիս գործող քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել. «Գործող քրեական օրենսգիրքը կարելի է բնութագրել որպես գենդերային առումով չեզոք: Ստամբուլի կոնվենցիայի[7] և ԿՆԽՎԿ-ի կողմից շոշափվող գենդերային հիմքով բռնության ձևերից շատերը բացակայում են, նաև կողմնակալության շարժառիթով կատարված հանցագործությունների հիմքերի ցանկից ակնհայտորեն բացակայում է գենդերային գործոնը: Կնոջ նկատմամբ բռնությունը ծանրացուցիչ հանգամանք է համարվում միայն, եթե կինը հղի է: Հետևաբար նախագծով չեն սահմանվում գենդերային հիմքով պայմանավորված շարժառիթների հետագծման միջոցները, մասնավորապես՝ գենդերային գործոնով պայմանավորված սպանությունը, և ինքնասպանության դրդելու հիմքում հաճախ ընկած գենդերային հատկանիշով

[7] Լրիվ անվանումը՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Կոնվենցիա

պայմանավորված շարժառիթներն ու դինամիկան»[8]: Կանանց նկատմամբ բռնությունն ինքնին համարվում է կատարված արարքը ծանրացնող հանգամանք մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ. երբ արարքը կատարվում է ընտանիքի անդամի, զուգընկերոջ կողմից կամ այն սեռային/գենդերային խտրականության հիմքով է կատարվել, ապա կիրառվում են առավել խիստ պատասխանատվության միջոցներ: Նման կարգավորումներ են առկա Բելգիայի[9], Բուլղարիայի[10], Էստոնիայի[11], Ֆրանսիայի[12] և Իտալիայի[13] օրենսդրությամբ:

Քրեական օրենսգրքի նոր փոփոխություններով և լրացումներով[14], որոնք ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից 12.04.2024թ., ներառվել է նաև զուգընկեր կամ նախկին զուգընկեր հատուկ սուբյեկտները: Քրեական օրենսգրքի նոր փոփոխություններով և լրացումներով, որոնք ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից 12.04.2024թ., ներառվել է նաև սեռով պայմանավորված խտրականության հիմքը՝ որպես ծանրացնող հանգամանք:

ԸԲ դեպքերով վարույթներով առկա չէ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդման բացառում. այսպես՝ «եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, **բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ**»: Սակայն իրավակիրառ պրակտիկայում դեռևս շարունակվում է այն պրակտիկան, երբ տուժող կնոջը նախաքննական մարմնում և դատարաններում հարցնում են՝ արդյոք բողոքը պնդում է, թե՝ ոչ:

ՀՀ քրեական օրենսգրքով թեև իրավահավասարության խախտումը քրեորեն հետապնդելի արարք է, այդուհանդերձ, խտրականության մասին առանձին օրենք Հայաստանում գոյություն չունի: Առկա չէ նաև իրավահավասարության խախտման դեպքերով դատական պրակտիկա: Այսպես՝ 2022թ. հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի[15] 203-րդ հոդվածով սահմանվել է խտրականությունը. Խտրականությունը՝ տարբերակված վերաբերմունքի դրսևորումը, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի,

---

[8] Հայաստանի քրեական օրենսգրքի նախագծի վերանայման արդյունքում առաջարկվող փոփոխությունների քննարկումը: Պատրաստվել է Եվրոպայի խորհրդի փորձագետ՝ Լորի Մանի կողմից՝ 2019 թվականի հոկտեմբերին:

[9] Տե՛ս հղմամբ՝ https://www.legislationline.org/download/id/8240/file/Belgium_CC_1867_am2018_fr.pdf

[10] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4152/file/PENAL_PROCEDURE_CODE_am2011_en.pdf

[11] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8244/file/Estonia_CC_am2019_en.pdf

[12] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8546/file/France_CC_am012020_fr.pdf

[13] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4357/file/Italy_CPC_updated_till_2012_Part_1_it.pdf

[14] Տե՛ս http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=73957

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181303

հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի հատուկ սուբյեկտը իշխանական կամ ծառայողական լիազորություններով օժտված պաշտոնյան է, որի պարագայում սահմանված է հետևյալ սանկցիան. պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հատկանշական է, որ պատժաչափը նոր քրեական օրենսգրքով մեղմացվել է. 2003թ.-2022թ. քրեական օրենսգրքի[16] 143-րդ հոդվածով /քաղաքացու իրավահավասարությունը խախտելը/ ամենախիստ պատիժը 2-ից մինչև 5 տարվա ազատազրկումն էր պաշտոնյաների պարագայում, իսկ նույն հոդվածի 1-ին մասով մինչև 2 տարի ազատազրկում էր սպառնում: Ինչևէ, հարկ է փաստել, որ դատական տեղեկատվական համակարգում datalex.am կայքում առկա չէ իրավահավասարության խախտման հիմքով դատական պրակտիկա: Առկա չէ նաև խտրականության իրավունքի խախտման գործով Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որևէ նախադեպ[17]:

Իսկ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածը որպես ոչ նյութական վնասի հատուցման ենթակա չի դիտարկում իրավահավասարության իրավունքի խախտումն առհասարակ:

Այսպես՝ գենդերային խտրականությունը շարունակում է մնալ մեր հասարակության խնդրահարույց հարցերից մեկը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և ԸԲ վերաբերյան իրավական ակտերի ուսումնասիրություն

Պեկինի հռչակագիր

Նյու Յորքում 2020 թ. մարտի 9-ին կայացել է Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 64-րդ նստաշրջանը, որի ընթացքում ընդունվել է Քաղաքական հռչակագիր:

«Պեկինի խորհրդաժողովից 25 տարի անց երկրներից ոչ մեկը չի հասել գենդերային հավասարության, աշխարհում պահպանվում է անհավասարության զգալի մակարդակը,

[16] https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646

[17] http://datalex.am/?app=AppPrecedentCaseSearch&page=default&tab=criminal

կանանց ու աղջիկներից շատերը գտնվում են խոցելի և մարգինալացած վիճակում, ենթարկվում ողջ կյանքի ընթացքում խտրականության բազմակի և փոխկապակցված ձևերի», – ասված է Քաղաքական հռչակագրի տեքստում[18]: Վերահաստատելով Պեկինի Գործողությունների ծրագիրն իրականացնելու քաղաքական կամքը՝ ղեկավարներն ընդունել են, որ ի հայտ են եկել նոր մարտահրավերներ, որոնք է՛լ ավելի համակարգված և ուժեղացված ջանքեր ու գործողություններ են պահանջում առաջիկայում, մասնավորապես՝ ապահովել կանանց լիարժեք, հավասար ու կառուցողական մասնակցությունը, ներկայացվածությունը և առաջնորդությունը բոլոր մակարդակներում և հանրային կյանքի բոլոր ոլորտներում.

– ապահովել կանանց տնտեսական հզորացումը, ներառյալ արժանապատիվ աշխատանքի մատչելիությունը, հավասար վարձատրությունը, սոցիալական ապահովությունը և ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը.

– վերացնել ընտանիքի անդամների խնամքի և այլ տնային աշխատանքների հետ կապված կանանց և աղջիկների չվճարվող աշխատանքի անհամաչափ բեռը.

– դադարեցնել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը և վնասակար պրակտիկաները.

– ապահովել զինված հակամարտություններում կանանց և աղջիկների պաշտպանությունը և կանանց մասնակցությունը խաղաղ գործընթացներին և միջնորդական նախաձեռնություններում.

Հիմնվելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցի վրա՝ հրապարակվել է «Գենդերային հավասարություն. Կանանց իրավունքները Պեկինից 25 տարի անց» զեկույցը՝ հիմնված Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր կանանց իրավունքների առաջընթացի և խոչընդոտների ուսումնասիրության վրա:

Զեկույցում, մասնավորապես, նշվում է, որ Պեկինի Գործողությունների ծրագրի[19] ընդունումից ի վեր որոշակի առաջընթաց է ձեռք բերվել կանանց և աղջիկների իրավունքների իրականացման ասպարեզում: Վերջին տասնամյակում աշխարհի 131 երկրում ընդունվել են կանանց հավասարության աջակցությանն ուղղված օրենքներ: Սակայն առաջընթացը չափազանց դանդաղ է և անհավասարաչափ: Այսօր կանայք առաջվա պես կրում են ընտանիքի անդամների մասին հոգ տանելու և տնային տնտեսություն վարելու չվարձատրվող աշխատանքի հիմնական բեռը և միջինը 16%-ով պակաս աշխատավարձ են ստանում, քան տղամարդիկ, ընդ որում, մի շարք երկրներում այդ ցուցանիշը հասնում է 35%-ի:

[18] Տե՛ս https://havasar-infohub.am/%D5%BA%D5%A5%D5%AF%D5%AB%D5%B6-25-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4/

[19] Տե՛ս https://eca.unwomen.org/ru/digital-library/publications/2020/03/womens-rights-in-review

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա

Կոնվենցիան ընդունվել է 2011թ.-ին

- Ուժի մեջ է մտել 2014թ.-ին
- Ստորագրել է ԵԽ անդամ 45 պետություն
- Վավերացրել է ԵԽ անդամ 38 պետություն. բացառություն են Հայաստանը, Բուլղարիան, Չեխիան, հունգարիան, Լատվիան, Լիտվան, Սլովակիան
- Չի ստորագրել Ադրբեջանը
- Թուրքիան թեև ստորագրել է 2011-ին, վավերացրել 2014-ին, սակայն 2021-ին հրաժարվել է
- 2018-ին Հայաստանը ստորագրել է կոնվենցիան՝ մի քանի հոդվածների առնչությամբ վերապահումներով:
- ՀՀ արդարադատության նախարարությունը 2019թ.-ին դիմել էր Վենետիկի հանձնաժողովին՝ Կոնվենցիայի վերաբերյալ հատուկ կարծիք ստանալու համար: Ըստ Հանձնաժողովի, Կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ, որը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Կոնվենցիայի հիմնական գործառույթը կանանց հանդեպ բռնության կանխումն է: Նման եզրահանգման է եկել Վենետիկի հանձնաժողովը:



ԵԽ Կոնվենցիայի նկատմամբ ՀՀ վերապահումներից փոխհատուցման տրամադրումը

Հայաստանի վերապահումներից մեկն առնչվում է համարժեք փոխհատուցմանը: Այսօր ՐԲ ենթարկված քաղաքացիները կարող են փոխհատուցում ստանալ բռնություն գործադրողից հանցագործությամբ պատճառված վնասի համար՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով: Սակայն եթե բռնություն գործադրողը վճարունակ չէ, գույք չունի, ապա պետությունը չի կարողանում բռնագանձել գույքային հայցը, հետևաբար տվյալ վարույթները կասեցվում են վճարման մասով: Ըստ Կոնվենցիայի, համարժեք պետական փոխհատուցում պետք է տրվի այն անձանց, ում պատճառվել է ծանր մարմնական վնասվածք կամ առողջության կորուստ՝ այն չափով, որ չափով պատճառված վնասը չի հատուցվել այլ աղբյուրներից, ինչպիսիք են՝ կատարողը և ապահովագրական կամ պետական ֆինանսավորում ունեցող առողջապահական կամ սոցիալական ծրագրերը: Սա մասնակից պետությունների համար խոչընդոտ չի հանդիսանում հատկացված փոխհատուցման դիմաց կատարողի դեմ ռեգրեսային պահանջ ներկայացնելու համար՝ պայմանով, որ պատշաճ կերպով հաշվի է առնվում տուժողի անվտանգությունը:

ԸԲ զոհերին մինչև 150 000 ՀՀ դրամի չափով աջակցություն է տրամադրում ՀՀ Կառավարությունը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Անուղղակի խտրականության բացառումը Կոնվենցիայով

Չնայած ՀՀ կողմից այն դեռևս չի վավերացվել, սակայն «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակառակ են պայմանագրի առարկային և նպատակին, երբ այն վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա պայմանագիրն ստորագրել է կամ փոխանակել է պայմանագիրը կազմավորող փաստաթղթերը մինչև այն պահը, քանի դեռ նա հստակ չի արտահայտել իր մտադրությունն այդ պայմանագրին չմասնակցելու մասին:

Այսպիսով Ստամբուլյան կոնվենցիան ստորագրած լինելու պայմաններում ՀՀ-ն պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակառակ են դրա առարկային և նպատակին: Ստամբուլյան կոնվենիցայի նպատակները սահմանված են դրա նախաբանում, ինչպես նաև 1-ին հոդվածում, որի 1-ին մասի համաձայն, Կոնվենցիայի նպատակներից են կանանց պաշտպանությունը բռնությունից, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի» 4-րդ հոդվածով. «1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ յուրաքանչյուր անձի, հատկապես՝ կանանց, բռնությունից զերծ մասնավոր և հանրային կյանքով ապրելու իրավունքը ապահովելու և պաշտպանելու ուղղությամբ:
(…)
4. Գենդերային հիմքով բռնությունից կանանց պաշտպանելուն և այն կանխելուն ուղղված այնպիսի հատուկ միջոցների ընդունումը, որոնք չեն վերաբերում տղամարդկանց, չի հանդիսանում խտրականության դրսևորման ձև՝ սույն Կոնվենցիայում օգտագործվող հասկացությունների համաձայն»:

Նույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն արարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են սույն Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ»: Նույն Կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն՝«1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դրսևորման

դեպքերով նախաքննական ու դատական վարույթներն իրականացվեն առանց անհարկի ձգձգումների՝ միաժամանակ քրեական դատավարության բոլոր փուլերում հաշվի առնելով տուժողի իրավունքները։

Փոփոխումներ և ինկորպորացիաներ

Ենթարկվել է փոփոխության հետևյալ փաստաթղթերի կողմից՝
Ud 21.01.2020 ՀՕ-61-Ն

Յուրաքանչյուր փոփոխությանը համապատասխանող ինկորպորացիան՝
Ud 20.05.2013 ՀՕ-57-Ն

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2013 թվականի մայիսի 20-ին

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Պետության ոչ արդյունավետ արձագանքը կարող է հանգեցնել տուժողների այնպիսի հիմնական իրավունքների խախտմանը, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունք, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, օրենքի առջև հավասար պաշտպանության իրավունքը, խտրականության արգելումը, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իրավական պաշտպանության միջոցի իրավունքը, հնարավոր լավագույն չափանիշներին համապատասխան՝ ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը։ Ընդ որում՝ ընտանեկան բռնությանը վերաբերող հանցագործություններին պետական արձագանքը և դրանց քննությանն ուղղված միջոցառումները պետք է ձեռնարկվեն այն հաշվառմամբ, որ քրեական արդարադատության համակարգի ընդհանուր և խտրական պասիվությունը բացառվի և չստեղծվի այնպիսի մթնոլորտ, որը նպաստի ընտանեկան բռնությանը[20]:

Այսպես՝ ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման ու պատշաճ քննության ապահովման՝ պետության պոզիտիվ պարտավորությունների համատեքստում Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն.

- իշխանությունները կրում են պարտավորություն՝ ձեռնարկելու պաշտպանության միջոցներ ընտանիքի անդամի կամ զուգընկերոջ կողմից անձի անձնական անձեռնմխելիության դեմ լուրջ խախտումները կանխարգելելու ուղղությամբ[21],

- իրական և անմիջական սպառնալիքի վտանգը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով ընտանիքում բռնության կոնկրետ համատեքստը։ Այս իրավիճակում, ոչ միայն հասարակության ընդհանուր պաշտպանությունն ապահովելու, այլև ամենից առաջ ընտանիքում բռնության հաջորդական դրվագների կրկնությունը հաշվի առնելու պարտավորության հարց է առաջ գալիս[22]:

[20] Տե՛ս, օրինակ, Եվրոպական դատարանի՝ Opuz v. Turkey գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02

[21] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ M. and Others v. Italy and Bulgaria գործով 2012 թվականի հուլիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 40020/03, կետ 105, 31 և Opuz v. Turkey գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 176

[22] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Talpis v. Italy գործով 2017 թվականի մարտի 2-ի վճիռը, գանգատ թիվ 41237/14, կետ 122

ՀՀ օրենքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»

Հայաստանի Հանրապետությունը 2013 թ. մայիսի 20-ին ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը[23]: Վերջինս կարևոր իրավական փաստաթուղթ է սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի նյութահիրավական բազան ապահովելու տեսանկյունից: Այն առաջին անգամ ՀՀ իրավական դաշտում սահմանել է գենդերային խտրականության ձևերը: Օրենքի 18-րդ հոդվածը նախատեսում է իրավական ակտերի գենդերային փորձաքննություն: Գենդերային փորձաքննությունն իրականացվում է նորմատիվ իրավական ակտի նախագծի ազդեցության գնահատման և նորմատիվ իրավական ակտի փորձաքննության միջոցով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Նույն դրույթի 2-րդ մասով սահմանված է, որ գենդերային փորձաքննությունն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման, նորմատիվ իրավական ակտերում և դրանց նախագծերում գենդերային հավասարության խախտումների փաստերը բացառելու և վերացնելու, Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գենդերային հավասարության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխանեցնելու, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովելու սկզբունքը պահպանելու, կանանց և տղամարդկանց սեռի հատկանիշով խտրականությունից պաշտպանելու համար: Ազգային ժողով[24] ներկայացված օրենսդրական նախագծերում, անգամ ամբողջական նոր օրենսգրքերի նախագծերում նման փորձաքննության մենք չհանդիպեցինք: Նույն օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված է, որ քաղաքացիները կարող են խտրականության խախտման հիմքով դիմել դատարան կամ վարչական մարմիններ: Սակայն դատական տեղեկատվական համակարգում՝ datalex.am կայքի «Քրեական գործեր» ենթաբաժնի ուսումնասիրությամբ բացահայտեցինք, որ իրավահավասարության խախտման հիմքով քրեաիրավական ոլորտում դատական պրակտիկա մեզանում առկա չէ: Այնուամենայնիվ, խտրականության փաստի ճանաչման պահանջներով քաղաքացիաիրավական ոլորտում դատական պրակտիկա առկա է, տես օրինակ՝ ԵԱՔԴ/4228/02/16 /այս գործով ճանաչվել է հայցվորի նկատմամբ դրսևորված խտրականության փաստը/, ԼԴ/1252/02/19, ԵԴ/1289/02/20, ԵԴ/0343/02/20, ԵԴ/0309/02/20, ԱՎԴ4/0043/02/19, ՎԴ/9706/05/23, և այլն:

Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023, 2024-2028 թվականների ռազմավարություններ

ՀՀ Կառավարության 19 սեպտեմբերի 2019 թվականի N 1334-Լ որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը[25]: Ռազմավարությունը

[23] Օրենքը տե՛ս հղմամբ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841

[24] http://parliament.am/drafts.php?lang=arm

[25] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=151906

հիմնված է դեռևս 2010թ.ին մշակված և ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի նիստում հավանության արժանացած Գենդերային քաղաքականության հայեցակարգի վրա: Ռազմավարությունը թվով 4-րդ է, որը հաջորդում է 1998-2000, 2004-2010, 2011-2015թթ. Ռազմավարություններին:

Ըստ Ռազմավարության, խնդրահարույց է քաղաքականության ոլորտում գենդերային հավասարության ճեղքվածքի ցուցանիշը, որով Հայաստանի Հանրապետությունը 115–րդ տեղում է:

Ընտանիքում բռնության դեմ պայքարի 2023-2025 թթ. ռազմավարության նախագիծ

Այս Նախագիծը մշակվել ու հանրային քննարկման[26] **է դրվել 2022թ.-ին, այն դեռ լրամշակման փուլում է: Նախագծում անդրադարձ կա ԸԲ դեպքերի հաշվառման կարգին: Ըստ Նախագծի,** «վերանայման անհրաժեշտություն ունեն նաև Օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը: Հիշատակման է արժանի հատկապես ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1381 – Ն որոշումը: Գործող կարգը չափազանց խրթին է և չի ապահովում բոլոր պատկան մարմինների կողմից տվյալների ստանդարտացված հավաքագրում: Բացի այդ՝ գործող որոշումը չի արտացոլում անձնական տվյալների պաշտպանության առաջնահերթությունը: Ուստի, առաջարկվում է ներդնել միասնական էլեկտրոնային հարթակ՝ տվյալների հավաքագրումը առավել պարզ, արդյունավետ դարձնելու նպատակով: Տվյալների հավաքագրումը պետք է իրականացվի ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականին համահունչ[27]: Ընտանիքում բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացված դեպքերի մասին տվյալները պետք է բացվեն ըստ բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց սեռի և տարիքի, նրանց միջև կապի բնույթի, բռնության տեսակի և բնակության վայրի և կարևոր այլ գործոնների (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը, հոգեկան առողջություն ունեցող անձի կարգավիճակը, աշխատանք ունենալու հանգամանքը): Հարկ է նաև երաշխավորել, որ տվյալների դասակարգերը ներդաշնակեցված լինեն դատաիրավական ամբողջ համակարգում (ոստիկանություն, քննչական կոմիտե, դատախազություն, դատարաններ): Ավելին, պետք է հատուկ ուշադրություն դարձվի անձնական տվյալների պաշտպանությանը, որը պետք է համահունչ լինի Հայաստանի կողմից վավերացված Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային, ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականի[28], ԳՐԵՎԻՈ-ի զեկույցներում պարզաբանված պահանջներին[29] և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին»:

---

[26] Տե՛ս https://www.e-draft.am/projects/4358/about

[27] Տե՛ս ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ Ընդհանուր հանձնարարական, պարբերություն 34 (b)):

[28] «Երաշխավորել, որ գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնության մասին տվյալների հավաքագրման և պահպանման գործընթացը համապատասխանի գործող միջազգային չափանիշներին և երաշխիքներին, այդ թվում՝ տվյալների պաշտպանության օրենսդրությանը: Տվյալների և վիճակագրության հավաքագրումը և օգտագործումը պետք է համապատասխանեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ընդունված միջազգային նորմերին և էթիկական սկզբունքներին» (պարբերություն 34(d)):

[29] Տե՛ս, օրինակ, ԳՐԵՎԻՈ-ի գնահատման զեկույցն Իտալիայի մասին (2020թ.). «Նման չափանիշներն հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա. չթույլատրված մուտքն անձնական տվյալներին հնարավոր չէ, մասնակից բոլոր

ՀՀ օրենքը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, նպատակ ունենալով
ապահովել ընտանիքի որպես հասարակության բնական ու հիմնական բջջի, հատուկ պաշտպանությունը,
ձևավորել ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկվածների անվտանգության և պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր,
ապահովել ընտանիքի անդամների անվտանգությունը և նպաստել ընտանիքում համերաշխության վերականգնմանը,
կանոնակարգել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ուղղությամբ պատասխանատու մարմինների գործունեությունը,
ապահովել ընտանիքում բռնության ենթարկվածներին հոգեբանական, նյութական և սոցիալական աջակցության տրամադրման և նրանց սոցիալական վերականգնման համար պատասխանատու մարմինների

Հայաստանում գործում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը:

Օրենքը գործունեության վեց տարիներին աննշան փոփոխության էր ենթարկվել, սակայն 2024թ. ապրիլի 12-ին Ազգային ժողովը հիշյալ օրենքում, ինչպես նաև հարակից օրենքներում համապարփակ փոփոխություններ և լրացումներ ընդունեց: Դրանք ուժի մեջ են մտել 2024թ. հուլիսի 1-ից:

ՀԲ օրենքի փոփոխությունները

Փոփոխվել է օրենքի անվանումը՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին»:

Փոխվել է օրենքի ՀԲ օրենքի վերնագիրը

Նախկին կարգավորում	Նոր կարգավորում
«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք	«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք

«Ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ հետամտումը, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև»:

մարմինները հետևում են հստակ սահմանված կարգերի, որոնցով կանոնակարգվում են տվյալների փոխանակման ընթացակարգերը, ապահովվում է այն անձանց լիարժեք անանունությունը, ում անձնական տվյալները գրանցվել են, այդ թվում՝ պահանջ, որ այդ տվյալները չեն տրամադրվում առանց նրանց գիտակցված համաձայնության, ինչպես նաև անհատներին հնարավոր չէ նույնականացնել հանրությանը հասանելի տվյալների միջոցով»: Պորտուգալիայի մասին զեկույցում (2019թ.) ԳՐԵՎԻՈ-ն ընդգծել է, որ հարկ է մշտապես երաշխավորել տուժողի անձնական տվյալների գաղտնիության պաշտպանությունը, ինչը նշանակում է, որ այդ տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին տուժողի գիտակցված համաձայնությամբ՝ բացառությամբ կյանքին սպառնացող իրավիճակների:

Ուժի եվ վերահսկողության անիվը

Սակայն Օրենքի փոփոխությամբ Ընտանեկան բռնության սահմանման մեջ ներառված չէ բռնության ուժի և վերահսկողության մոտիվը: Գենդերային առումով չեզոք սահմանման պարագայում, որտեղ բացակայում է ուժի և վերահսկողության անիվի բացառումը, հաճախ երկու անձինք՝ թե՛ կինը, թե՛ տղամարդը ընկալվում են որպես բռնարար: Այս պարագայում անհայտ է մնում, թե ով է զոհը:

Սահմանվել է «զուգընկեր» նոր եզրույթը:

Նոր հասկացություն օրենքում՝ զուգընկեր

Զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:

Վերանայվել են անհետաձգելի միջամտության և պաշտպանական միջոցների ժամկետները, համապատասխանաբար՝ 20-25 օր անհետաձգելի միջամտության դեպքում նախկին 5-20 օրվա փոխարեն և 4-12 ամիս պաշտպանական որոշման պարագայում՝ նախկին 6 ամսվա փոխարեն:

Վերանայվել են պաշտպանական որոշման ժամկետը

Նախկին կարգավորում	Նոր կարգավորում
Պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով:	**Պաշտպանական որոշումը** կայացվում է 4-12 ամիս ժամկետով, կարող է երկարաձգվել՝ մինչեւ վեց ամիս ժամկետով: (Օրենքի 8-րդ հոդված)

ՄԴՈ-1522 Որոշում

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան եվ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն, անհետաձգելի միջամտության որոշմամբ ընտանիքում բռնություն գործադրած անձին կարող է հարկադրվել անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելվել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Հիշյալ դրույթի բառացի մեկնաբանությունից բխում է, որ ոստիկանության առջև դրված չէ պարտավորություն բռնություն գործադրած անձին ժամանակավոր կացարանով ապահովելու վերաբերյալ:

ՄԴՈ-1522 որոշման համաձայն, ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով նախատեսված սահմանափակումներն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվել նրա բնակության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Հիշյալ Որոշման իրավական դիրքորոշման համաձայն, ընտանիքում բռնություն գործադրած անձին ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից անհապաղ հեռանալու սահմանափակման կիրառումից առաջ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է քննարկել նրա բնակության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը: Հաճախ հիշյալ հարցը դուրս է մնում ուշադրությունից, և բռնության ենթարկված անձին՝ խնամքի տակ գտնվող երեխաներով առաջարկվում է ապաստարան, որտեղ երեխաների լավագույն շահին որոշ դեպքերում կարող է հակադրվել նրանց ուսման անընդհատության խոչընդոտը, խմբակների հաճախելու արգելքը: Հաճախ մի ամբողջ բազմազավակ ընտանիք ուղղորդվում է ապաստարան, սակայն բռնություն գործադրած անձը միայնակ շարունակում է մնալ տանը՝ չկտրվելով իր առօրյայից: Այլ կերպ ասած՝ դարձյալ տուժում է բռնության ենթարկված անձը:

Պրոցեսուալ խնդիրներ/ Զոհակենտրոն մոտեցում

- Բռնության ենթարկված անձը ուղղորդվում է ապաստարան, սակայն չի դիտարկվում բռնություն գործադրողի՝ այլ վայր տեղափոխվելու հարցը:
- Հաճախ կինը՝ անչափահաս երեխաների հետ գտնվում է ապաստարանում, տուժում են երեխաները /ուսում և այլ/
- Ոստիկանությունը վկայակոչում է ՍԴՈ- 1522 որոշումը. ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում հարաբերությունների վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով նախատեսված սահմանափակումներն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվել նրա բնակության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

Պրոցեսուալ խնդիրներ/ Զոհակենտրոն մոտեցում

- Նախաքննությունը հաճախ տևական պրոցես է՝ 4-6 ամիս, երբեմն՝ տարի և ավելի
- Դատաբժշկական փորձաքննության նշանակման որոշումները հազվադեպ, բայց ուշ են նշանակվում:
- Ապաստարանի դեպքերով խնդրային է ԸԲ զոհին կրկին բռնության վայր ներկայացնելը, երբ կա անվտանգության խնդիր: Հաճախ քննչական գործողությունից հետո դժվար է լինում զոհին անվտանգ վերադարձնել ապաստարան:
- Հնարավորության դեպքում դատաբժշկական փորձաքննության եզրակացության իրականացումը ապաստարանի դեպքերով նշանակել մայրաքաղաքին հնարավորինս մոտ ԲԿ-ներում:
- Բռնության ենթարկված անձը մի քանի անգամ կանչվում է քննչական բաժին՝ հարցաքննության, լրացուցիչ հարցաքննության, առերեսման:
- Այս ողջ ընթացքում բռնության ենթարկվածը մի քանի անգամ ստիպված է լինում վերհիշել դեպքը, պատմել, ինչը հանգեցնում է կրկնակի զոհականացման:
- Հաճախ կանայք նշում են կարծրատիպային վերաբերմունքի, հնչող հարցերի, անվստահության կանխավարկածի մասին:
- Առերեսումները հատկապես տրավմատիկ են ԸԲ գործերով, հաճախ խնդրում ենք ոստիկանի ներկայություն, ունեցել ենք նաև քննչական բաժանմունքի շենքի դիմացից շահառուի առևանգման դեպք:
- Հաճախ առերեսումները ծառայում են որպես յուրօրինակ հաշտության միջոց:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության վերաբերյալ միջազգային կարգավորումներ

Պարտադիր զինվորական ծառայության համատեքստում ՄԻԵԴ-ը վճռել է, որ ինչպես անազատության մեջ պահվող անձանց դեպքում, ժամկետային զինծառայողները նույնպես գտնվում են պետության իշխանությունների բացառիկ հսկողության ներքո, իշխանությունների վրա դրված է նրանց պաշտպանելու պարտականություն[30]:

Եվրոպական դատարանը վճռել է, որ պետության առաջնային պարտականությունն է ներդնել կյանքին կամ ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող այն վտանգի աստիճանը հաշվի առնող կանոններ, որը կարող է առաջանալ ոչ միայն ռազմական գործողությունների և օպերացիաների բնույթի, այլև մարդկային գործոնի հետ կապված: Դա ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ պետությունը որոշում է սովորական քաղաքացիներին զորակոչել՝ զինվորական ծառայություն իրականացնելու համար: Այդպիսի կանոններով պետք է պահանջվի ընդունել գործնական միջոցներ, որոնք ուղղված են ժամկետային զինծառայողներին զինվորական կյանքին ներհատուկ վտանգներից արդյունավետորեն պաշտպանելուն, և պատշաճ ընթացակարգեր այն թերությունները և սխալները հայտնաբերելու համար, որոնք այդ առնչությամբ կարող են կատարվել տարբեր մակարդակներում գործող պատասխանատուների կողմից[31]:

➢ **«Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործը** վերաբերում է հայկական բանակում զինծառայողի մահվանը և կարևոր գործ է, որը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԴ) 3-րդ հոդվածի կիրառմանը, որն արգելում է խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը:

Դիմումատուն՝ Նանա Մուրադյանը, ՀՀ բանակի զինծառայող Վալերիկ Մուրադյանի մայրն է: Զինծառայողը հայտնաբերվել է պտտաձողից կախված վիճակում 2010-ին: Դատարանը հաստատել է, որ զինծառայողի մահը պայմանավորված է եղել բանակի իշխանությունների կողմից վտանգը կանխելու համար ձեռնարկված անբավարար միջոցներով: Սպանվածի ընտանիքը պնդել է, որ չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր՝ պաշտպանելու իրենց որդու առողջությունն ու անվտանգությունը և չեն կարողացել արդյունավետ հետաքննություն անցկացնել նրա մահվան հանգամանքների վերաբերյալ: Դիմումատուները նաև մատնանշել են անուղղակի խտրականության հնարավոր առկայությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ զինվորական անձնակազմը, հատկապես ցածր պաշտոններում, չի ունեցել համապատասխան պաշտպանություն և ենթարկվել ավելի մեծ ռիսկերի և խտրական ու վատ վերաբերմունքի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2022թ. կայացրած իր որոշմամբ արձանագրել է, որ զինծառայող Մուրադյանի մահը զինծառայության ժամանակ եղել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված նրա իրավունքների խախտման հետևանք: Հայաստանի իշխանությունները չեն կարողացան ապահովել անվտանգության համապատասխան պայմաններ: Դատարանը նշել է, որ նման իրավիճակներում պետությունը պարտավոր է ապահովել, որ զինվորականները չենթարկվեն բռնության կամ դաժան վերաբերմունքի, և որ նա պետք է ապահովի ծառայության համապատասխան պայմաններ, ներառյալ համապատասխան անվտանգության միջոցներ:

---

[30] տե՛ս Բեկերն ընդդեմ Թուրքիայի [Beker v. Turkey], թիվ 27866/03, §§ 41-42, 2009թ. մարտի 24, Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի [Mosendz v. Ukraine], թիվ 52013/08, § 92, 2013թ. հունվարի 17

[31] տե՛ս Մոսենձի գործը, § 91, Պերեվեդենցևն ընդդեմ Ռուսաստանի [Perevedentsevy v. Russia], թիվ 39583/05, § 94, 2014թ. ապրիլի 24

ՄԻԵԴ-ը նաև արձանագրել է, որ Հայաստանի իշխանությունները պատշաճ քննություն չեն իրականացրել նրա մահվան հանգամանքները պարզելու համար: Արդյունավետ հետաքննության բացակայությունը նույնպես մարդու իրավունքների միջազգային չափանիշների խախտում է:

Դատարանը գտել է, որ Հայաստանի իշխանությունները չեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները զինծառայողի անվտանգությունն ապահովելու համար՝ չնայած նրա կյանքին և առողջությանը սպառնացող վտանգին: Սա կարող է ներառել ինչպես ֆիզիկական անվտանգություն, այնպես էլ հոգեբանական աջակցություն, հատկապես այն պայմաններում, որոնք կարող են վտանգ ներկայացնել կյանքին:

«Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործը կարևոր նախադեպ է հասկանալու, թե ինչպես է ՄԻԵԴ-ը քննարկում խաղաղ պայմաններում զինվորականների մահվան դեպքերը և ինչ չափանիշների հիման վրա կարող է հետաքննություն վարվել: Այս դեպքը ընդգծում է զինվորականների իրավունքների հարգման կարևորությունը, ներառյալ նրանց կյանքի իրավունքը, անվտանգությունը և անմարդկային վերաբերմունքից պաշտպանվելու իրավունքը:

Որոշումը նաև անդրադառնում է զինվորականների մահվան դեպքերի հետաքննության արդյունավետության խնդրին, որը ՄԻԵԴ-ի ավելի լայն պրակտիկայի մաս է կազմում պետական իշխանությունների կողմից թափանցիկության և հաշվետվողականության ապահովման հարցում:

➢ **«Օհանջանյանն ընդդեմ Հայաստանի» գործը** վերաբերում է Հայաստանի Հանրապետության բանակում զինծառայող Տիգրան Օհանջանյանի մահվան և մարդու իրավունքների խախտումներին, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածների համատեքստում: Սույն գործը վերաբերում է խաղաղ պայմաններում զինծառայողի մահվան հանգամանքներին և այն հանգամանքին, թե ինչպես են Հայաստանի իշխանությունները կատարել զինծառայողների անվտանգությունն ապահովելու և արդյունավետ քննություն իրականացնելու իրենց պարտավորությունները: ՄԻԵԴ-ը ճանաչել է Կենվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

ՄԻԵԿ 2-րդ հոդվածի պահանջն է ապահովել անկախ և անաչառ պաշտոնական քննություն, որը բավարարում է արդյունավետության որոշակի նվազագույն չափանիշների: Իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ, պարտավոր են նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ՝ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին: Հասարակական հսկողության պահանջը այս համատեքստում նույնպես կարևոր է[32]:

➢ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1742 (2006թ.) Հանձնարարականի համաձայն՝ վեհաժողովը հորդորում է անդամ պետություններին ապահովել զինծառայողների իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանություն, մասնավորապես՝ ապահովել, որպեսզի խախտման յուրաքանչյուր դեպք հայտնի դառնա համապատասխան մարմիններին և ենթարկվի մանրակրկիտ, հրապարակային (բաց) և արագ

[32] Կաստը և այլոք ընդդեմ Ուկրաինայի (Kast and Others v. Ukraine), գանգատ թիվ 29971/04, 18.12.2008թ., կետ 116

քննության, որ մեղավորները դատական կարգով հետապնդվեն և ենթարկվեն պատասխանատվության[33]:

➢ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2010 թվականի թիվ 4 Հանձնարարականի համաձայն՝ ցանկացած զինծառայողի՝ կասկածելի հանգամանքներում մահվան կամ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում պետք է իրականացվի անկախ և արդյունավետ քննություն[34]:

Գործերը «ողջամիտ ժամկետում» քննելու պահանջի պայմաններում ՄԻԵԴ-ն ընդգծել է արդարադատության՝ առանց ձգձգումների իրականացման կարևորությունը, ինչը կարող է վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը: Չափազանց մեծ ծանրաբեռնվածությունը չի կարող հաշվի առնվել որպես արդարացում[35]: Ավելին, գործերի քննությունն արագացնելու համար նախատեսված բարեփոխումների ներդրումը չի կարող արդարացնել ձգձգումները, քանի որ պետությունները պարտավորվում են այնպես կազմակերպել նման միջոցների ուժի մեջ մտնելն ու կիրարկումը, որ հնարավոր լինի խուսափել քննության փուլում գտնվող գործերի քննությունը երկարաձգելուց[36]:

➢ **«ՄըքՔերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի» գործով** ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պետք է առկա լինի քննության կամ դրա արդյունքների նկատմամբ հանրության հսկողության բավարար տարրը՝ ապահովելու համար քննության հաշվետվողականությունն ինչպես գործնականում, այնպես էլ՝ տեսականորեն: Հանրության հսկողության չափը այս կամ այն գործով կարող է տարբեր լինել, բայց նվազագույն պահանջն այն է, որ տուժողի իրավահաջորդը պետք է լինի դատավարության գործընթացում այն աստիճանի ներգրավված, որն անհրաժեշտ է իր օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորելու համար[37]:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հհ քրեական օրենսգրքի դրույթների վերլուծություն

01. 08. 2003թ. գործող ՀՀ քրեական օրենսգրքի «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները» 12-րդ բաժնի և համանուն 32-րդ գլխի 356-րդ հոդվածից մինչև 383-րդ հոդվածը ներառված էին համապատասխան բոլոր հանցակազմերը: Այսինքն՝ 28 հանցակազմ:

01. 07.2022թ. գործող ՀՀ քրեական օրենսգրքի «Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները» 15-րդ բաժինը ներառում է 5 գլուխ: Ընդհանուր 35 հանցակազմ:

---

[33] ԵԽ Նախարարների Կոմիտե, Զինծառայողների իրավունքներ, Հանձնարարականի հավելված,կետ 9, 9.9

[34] ԵԽ Նախարարների Կոմիտե, Զինծառայողների իրավունքներ, Հանձնարարականի հավելված, կետ 7

[35] Տես Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի [H. v France], գանգատ թիվ 10073/82, 24.10.1989թ., կետ 58, Կատե Կլինչ դե լա Գրանժն ընդդեմ Իտալիայի [Katte Klitsche de la Grange v Italy], գանգատ թիվ 12539/86, 27.10.1994թ., § 61, Վոկանտուրոն ընդդեմ Իտալիայի [Vocaturo v Italy], գանգատ թիվ 11891/85, 24.05.1991թ., § 17, Կապելլոն ընդդեմ Իտալիայի [Cappello v Italy], գանգատ թիվ 12783/87, 27.02.199թ., § 17:

[36] Ֆիսանոտին ընդդեմ Իտալիայի [Fisanotti v Italy], գանգատ թիվ 99/1997/883/1095, 23.04.1998թ., § 22:

[37] «ՄըքՔերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի» [McKerrv.UK], գանգատ թիվ 28883/95, 04.05.2001թ., կետ 115

- «Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները» 46-րդ գլուխի հանցակազմերը ներկայացված են 516-524 հոդվածներում:
- «Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ» 47-րդ գլխի հանցակազմերը ներկայացված են 525-531 հոդվածներում:
- «Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը» 48-րդ գլխի հանցակազմերը ներկայացված են 532-539 հոդվածներում:
- «Հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները» 49-րդ գլխի հանցակազմերը ներկայացված են 540-548 հոդվածներում:
- «Զինվորական պաշտոնեական հանցագործությունները» 50-րդ գլխի հանցակազմերը ներկայացված են 549 և 550 հոդվածներում:

Այսինքն՝ զինվորական պաշտոնեական հանցագործությունները նախատեսված են ընդամենը 2 հոդվածով՝

549-րդ հոդված՝ «Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը»՝

1. Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն առաջացրել է հանցանքի կամ այլ իրավախախտման պարտակում կամ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

4) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման

խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:

550-րդ հոդված՝ «Զինվորական պաշտոնեական անփութությունը»՝

1. Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:

Վերը մեջբերված երկու հոդվածներով զինվորական պաշտոնեական հանցագործություններում բացակայում է անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառման հանցակազմը: Այսինքն՝ թե՛ իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու, թե՛ զինվորական պաշտոնեական անփութության հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառման հանցակազմ նախատեսված չէ:

Այս իրողությունը խնդրահարույց է և կարող է հանգեցնել անուղղակի խտրական մոտեցման, քանի որ «Հրաման չկատարելը» 516-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայով որպես

հանցակազմ հստակ նախատեսված է նաև՝ անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հետևանքը նաև ծանրացնող հիմքով՝ սպայական կամ ավանգ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից: Նույն կերպ՝ «Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով» 517-րդ հոդվածի 1-ին մասով նույնպես նախատեսված է պատասխանատվություն անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար:

Ինչ վերաբերում է պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ 549-550-րդ հոդվածների 1-ին մասերում նշված՝ *«անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին»* ձևակերպմանը, ապա անձի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին էական վնաս պատճառել ձևակերպումը խիստ անորոշ է և անհասկանալի, թե որոնք են էական: 459-550-րդ հոդվածների 4-րդ մասերում հստակ նշված է, որ «*գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը*»: Թեև քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 15-րդ կետով սահմանված է «**այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս**՝ սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում, հոդվածի մասում կամ կետում թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանք» ձևակերպումը, այնուամենայնիվ այն բավարար չափով որոշակի չէ:

01. 07. 2022թ. գործող Քրեական օրենսգրքի 518-րդ հոդվածով նախատեսված է՝ «Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ նրա պարտականությունների իրականացումը խոչընդոտելը» հանցակազմը՝

1. Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ ծառայողական պարտականությունների կատարումը խոչընդոտելը կամ այդ պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը, որը դրսևորվել է հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով կամ շանտաժով: Նույն հոդվածի մյուս մասերով նախատեսված են նաև ծանրացուցիչ հանգամանքները և պատիժները:

Ուշադրության է արժանի, որ ոչ հրամանատարի (պետի), այսինքն՝ ենթակա զինծառայողի պարտականությունների իրացմանը հրամանատարի (պետի) կողմից խոչընդոտելու հանցակազմ նախատեսված չէ: Օրինակ, ինչպես 519-րդ հոդվածով՝ հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, իսկ 520-րդ հոդվածով նույն հանցակազմը, բայց ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը:

Նույն պատկերը, այսինքն՝ ենթադրյալ անուղղակի խտրական մոտեցման հանգեցնող իրավիճակն առկա է նաև 521-րդ հոդվածի հանցակազմի պարագայում:

521-րդ հոդված «Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում»

1. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոն խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում,

որն արտահայտվել է անձին հարվածներ հասցնելով կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելով կամ պարբերաբար նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելով։

Հոդվածի մյուս մասերով նախատեսված են ծանրացնող հանգամանքները և պատիժները։

Այսինքն՝ հրամանատարի (պետի) կողմից ենթակայի նկատմամբ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը առանձնացված չեն, որպես հանցակազմեր։

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 01. 08. 2023թ-ից գործող քրեական օրենսգրքում միայն մեկ՝ 356-րդ հոդվածով էր նախատեսված «Հրամանը չկատարելը» հանցակազմի բոլոր դիսպոզիցիաները, իսկ 01. 07. 2022թ. նոր օրենսգրքով այս հանցակազմը նախատեսված է երկու առանձին հոդվածներով։ Այսպես՝ նոր օրենսգրքի

«Հրամանը չկատարելը» 516-րդ հոդվածի 1-3 մասերի համաձայն՝

1. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից,

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

4) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով։

«Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով» 517-րդ հոդվածի 1-3 մասերի համաձայն՝

1. Ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու

առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

3) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Երկու հոդվածներով էլ նախատեսված են անզգուշությամբ մարդու առողջությանը միջին կամ ծանր վնասի պատճառում կամ անզգուշությամբ մահ առաջացնելը, սակայն 517-րդ հոդվածով զգալիորեն մեղմ պատիժներ են նախատեսված:

Հասկանալի է, որ 516-րդ հոդվածը վերաբերում է դիտավորությամբ հրաման չկատարելու մասին, իսկ 517-րդ հոդվածով՝ հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով: Այնուամենայնիվ, երկու հանցակազմերով էլ հետևանքներն անզգուշությամբ են առաջանում: Զինծառայողի կողմից հրաման չկատարելու դիտավորությունը կամ ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքը պարզելը գործնականում բավական բարդ է և դժվար ապացուցվող: Հետևաբար, պատիժների տեսակետից նման զգալի տարբերությունը մտահոգություն է առաջացնում և կարող է հանգեցնել անուղղակի խտրական մոտեցման, քանի որ հանցագործության որակումն այս կամ այն հոդվածով կարող է կիրառվել ընտրովի:

Այնուամենայնիվ, 01. 07. 2022թ-ից գործող քրեական օրենսգրքով այս հանցակազմի/ների/ վերաբերյալ առավել հստակություն է առկա վրա հասած հետևանքների առումով, մասնավորապես՝ առողջությանը միջին կամ ծանր վնաս պատճառելը, մահ առաջացնելը: 01. 08. 2003թ. քրեական օրենսգրքում պարզապես նշված էր՝ ծառայությանը էական վնաս պատճառել կամ ծանր հետևանքներ առաջացնել:

356-րդ հոդված «Հրամանը չկատարելը»

1. Պետի օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, կամ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասնհինգ տարի ժամկետով:

4. Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: /. . . /

«ՀՀ փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագիծ

«ՀՀ փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը[38] մշակվել է դեռևս 2020թ.-ին, այն պետք է օրենքի ուժ ստանար 4 տարի առաջ, այն դեռ լրամշակման փուլում է: Նախագծի 13-րդ հոդվածով նախատեսված էր, որ «հանձնաժողովի գործունեությունն ուղղված է 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը (այսուհետ՝ ուսումնասիրվող ժամանակահատված) տեղի ունեցած՝ սույն հոդվածով նախատեսված դեպքերի և իրադարձությունների (այսուհետ նաև՝ դեպքեր և իրադարձություններ) շրջանակում կամ դրանց հետևանքով կատարված՝ մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների (այսուհետ նաև՝ խախտումներ) վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը, որոնք ներառում են.

1) համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպում և անցկացում,

2) հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,

3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումներ,

4) անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումներ,

[38] https://www.e-draft.am/projects/2512

5) ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքեր,

6) վերոնշյալ դեպքերի և իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դեպքեր և իրադարձություններ, որոնց Հանձնաժողովը անհրաժեշտ և հիմնավոր կհամարի անդրադառնալ»:

Կարևոր հանգամանք է, որ Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է լինելու 1991-ից տեղի ունեցած դեպքերին, մարդու իրավունքների հիմնարար իրավունքների խախտումներին: Սակայն Նախագիծը, հետևաբար և Օրենքը պիտի նախատեսեն Փաստահավաք հանձնաժողովի իրավասության և գործունեության ուղղությունների առավել լայն սպեկտոր, քան ներկայացված է այժմ Նախագծով: Ստեղծվելիք Փաստահավաք հանձնաժողովի իրավասության ու գործունեության ուղղությունները լրացվելու կարիք ունեն: Օրինակ՝ ընդգրկված չեն ՄԻԵԿ-ի հետևյալ հոդվածների ներքո պաշտպանվող հիմնարար իրավունքների խախտման դեպքերը, որոնք սեփականության կամ ընտրական իրավունքի իրացումից պակաս կարևոր չեն, եթե ոչ հակառակը: Այսպես՝ կարևորում ենք ՄԻԵԿ 2-րդ /կյանքի իրավունքը/, 3-րդ /խոշտանգումները կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը/, 6-րդ /արդար դատաքննության իրավունքը/ հոդվածներով նախատեսված հիմնարար իրավունքների խախտման դեպքերը ևս դարձնել Հանձնաժողովի քննության նյութ, քանզի մատնանշված իրավունքները բացարձակ իրավունքներ են, դրանք որևէ կերպ սահմանափակման ենթակա չեն: Բացի այդ, շուրջ 30 տարվա վաղեմության իրադարձությունները լիարժեք ներկայացված չեն լինի, եթե չընդգրկվեն նաև ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով պաշտպանվող վերը հիշատակված հիմնարար, բացարձակ իրավունքների խախտումներին առնչվող դեպքերն ու իրադարձությունները: Քաղաքական, իրավական առումով նախկին բոլոր ընտրությունների վերաբերյալ գնահատականները հնարավոր են այլընտրանքային միջոցներով, օրինակ՝ հատուկ ռեզոլյուցիայի ընդունմամբ: Այնինչ վերը հիշատակված հոդվածների ներքո ամրագրված իրավունքների համատարած խախտումների մասով պետք է նոր քննություն:

Հայաստանը վերջին 33 տարիների ընթացքում դատահիրավական բարեփոխումների քառափուլ շրջան է անցել, դատահիրավական ոլորտի օրենսդրությունը պարբերաբար կատարելագործվել ու կատարելագործվում է, եռաստիճան դատական համակարգ է ստեղծվել, ՄԻԵԴ-ի ու Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ են կայացվել, զարգացել է նախադեպային իրավունքը, արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ են ներդրվել, ավելացել, սակայն երբևէ որևէ անդրադարձ չի կատարվել նախկին իրավակարգի ժամանակ քննված մարդու իրավունքների համակարգային խախտումներով գործերին: Այնինչ մինչև 2003թ-ը քննված գործերով քաղաքացիները նույնիսկ չեն կարողացել օգտվել եռաստիճան դատական համակարգի՝ գործերի վերանայման, բողոքարկման մեխանիզմից, չեն կարողացել նաև իրենց դատավճիռները վիճարկել ՄԻԵԴ-ում այն պարզ պատճառով, որ ՀՀ-ն ԵԽ անդամ պետություն չէր:

Դատարանի սխալվելու հավանականությունն ընդունում են անգամ հարյուրամյակների դատահիրավական համակարգեր ունեցող զարգացած ժողովրդավարական պետություններում: Ավելին՝ արդեն 30 տարի զարգացած ժողովրդավարությամբ պետություններում քայլեր են ձեռնարկվում դրանք շտկելու ուղղությամբ: Արդյունքում՝ նույնիսկ տարիներ անց բեկանվում են օրինական ուժի մեջ մտած դատավճիռներ,

Իսրայելում, օրինակ, 20 տարի առաջ է հիմնվել հանրային պաշտպանի գրասենյակը[39]: Արդարադատության նախարարության կազմում գործող այդ գրասենյակում գործում է նաև քրեական գործերի վերաբացմամբ զբաղվող բաժինը[40]: Այն ունի քրեական գործերի ուսումնասիրման լիազորություն՝ դատապարտվածների դիմումների հիման վրա, իսկ երբ գործերի վերաբացման հիմքեր են ի հայտ գալիս, նաև հնարավորություն ունի դիմելու Գերագույն դատարան:

Քրեական գործերի վերանայման հանձնաժողովը (CCRC) հանրային մարմին է, որը ստեղծվել է 1997 թ-ին Մեծ Բրիտանիայի տարածքում հնարավոր դատական սխալները ուսումնասիրելու նպատակով: Այս մարմնի հիմնադրմանը նախորդել է Պառլամենտի կողմից 1995 թ-ին ընդունված Քրեական գործերի վերանայման ակտը: Հանձնաժողովն ունի իրավասություն ուսումնասիրելու քրեական գործերը և հետ ուղարկելու Վերաքննիչ դատարան, եթե գտնի, որ կա դատավճռի բեկանման կամ պատժաչափի նվազեցման իրական հնարավորություն: Հանձնաժողովն ունի հատուկ լիազորություն պետական բոլոր մարմիններից ստանալու անհրաժեշտ բոլոր նյութերն ու տեղեկատվությունը քրեական գործերի ուսումնասիրման համար, նաև նշանակելու փորձաքննություններ, խոսելու վկաների հետ: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը իրավունք ունի նոր փորձագետ հրավիրել: Հանձնաժողովը գտնվում է Բրիմինգեմում: Ունի 90 աշխատակից, այդ թվում՝ 40 հետազոտողներ: 12 հանձնաժողովականները նշանակվում են Հանրային հարցերի հանձնաժողովականի համաձայնությամբ: Նախ դատապարտյալները դիմում են ներկայացվում Հանձնաժողով: Դա անելու համար պարտադիր չէ փաստաբան ունենալ: Դատական սխալի վերհանումը հանձնաժողովի աշխատանքի գլխավոր նպատակն է: 1997 թ-ից մինչև 2016 թ-ի հունվարի 31-ը հանձնաժողովը ստացել է ավելի քան 20 հազար դիմում, որոնցից 19.234-ը օրինական ուժի մեջ մտած դատավճիռներ են եղել: 19 տարվա ընթացքում հանձնաժողովը 612 քրեական գործով է տեսել վերանայման հնարավորություն: Արդյունքում՝ արդեն բեկանվել է 402 դատավճիռ, 171 գործով նախկինում կայացված դատավճիռները չեղյալ են համարվել: Ներկայումս 797 քրեական գործ հանձնաժողովի կողմից դեռ ուսումնասիրման փուլում է, իսկ 398 գործով սպասվում են վերանայումներ: «Մենք լիովին անկախ մարմին ենք, մենք չենք աշխատում դատարանների, ոստիկանության, մեղադրանքի կողմի կամ այն մարդկանց համար, ում գործերը ուսումնասիրում ենք: Մենք մնում ենք անկախ բոլոր կողմերից այնպես, որ կարողանանք հետազոտել հնարավոր դատական սխալները»,-ասված է Հանձնաժողովի կայքում[41]:

ՀՀ վարչապետի Ն-888 որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի[42] գործունեությունը որոշակի իմաստով նախորդել է Փաստահավաք հանձնաժողովի կազմավորմանը, որի շրջանակներում զբաղվել ենք ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի ուսումնասիրությամբ՝ կազմելով հինգ խորհրդատվական զեկույց՝ հիշյալ քրեական գործերի խախտումների վերաբերյալ: Գործերը վերաբացվել են զեկույցների հիման վրա, սակայն քրեական գործերով

[39] https://www.justice.gov.il/En/Units/PublicDefense/About/Pages/default.aspx

[40] https://www.justice.gov.il/En/Units/PublicDefense/About/Pages/Retrials.aspx

[41] https://ccrc.gov.uk/

[42] https://armenpress.am/arm/news/1023915.html

հանցակազմերի վերաորակումներ չեն հետևել ինքնասպանության հակելը չի վերաորակվել սպանության:

Արձանագրված խնդիրներ եվ եզրակացություններ

Իրավական ակտերի ուսումնասիրությամբ արձանագրել ենք հետևյալ խնդիրները, որոնք կարող են հանգեցնել որոշակի խմբի նկատմամբ, տվյալ դեպքում կանանց և զինծառայողների նկատմամբ ենթադրյալ անուղղակի խտրականության.

Կանանց իրավունքներ

- Հայաստանը դեռևս չունի համապարփակ օրենք խտրականության բացառման մասին: Օրենքի առաջին նախագիծը մշակվել է 2018-ին, ապա մի քանի անգամ լրամշակվել է:

- «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքը մշակումից 6 տարի անց դեռևս լրամշակման փուլում է:

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքով թեև սահմանված են խտրականության բոլոր ձևերն, այդուհանդերձ, այն կրում է դեկլարատիվ բնույթ. իրավահավասարության խախտման համար պատասխանատվության գործուն մեխանիզմներ և համապատասխան կարգ մշակված չէ:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով ոչ նյութական վնասի հատուցում նախատեսված չէ իրավահավասարության իրավունքի խախտման պարագայում: Սակայն «Իրավահավասարության ապահովման եվ խտրականությունից պաշտպանության մասին օրենքի նախագծի հետ համատեղ ներկայացված հարակից օրենքների նախագծերի շրջանակում այս հարցը կարգավորվում է, մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագծով 162.1-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով. «10) խտրականության չենթարկվելու իրավունքը»:

- Քաղաքացու իրավահավասարության խախտման պարագայում (խտրականություն) ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժները ոչ միայն մեղմացվել են, այլ ՀՀ-ում այս հոդվածներով չկա դատական պրակտիկա: Հետևաբար՝ ՀՀ-ում այս հանցագործությունները կամ չեն բացահայտվում կամ չեն գործում քրեական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները:

- Անուղղակի խտրականության կարող են հանգեցնել անգամ չեզոք օրենսդրական նորմերը, օրինակ՝ քրեական օրենսգրքի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում «մերձավոր ազգականի» կողմից կատարված լինելու վերաբերյալ խստացնող դրույթը: Այդպիսով՝ երկու եղբայրների միջև գույքը կիսելու համար ծեծը, թեև ընտանեկան բռնություն չէ, քանի որ բացակայում է ուժի և վերահսկողության բաղկացուցիչը, այդուհանդերձ, նրանք առավել խիստ պատասխանատվության կարող ն ենթարկվել:

- Քրեական օրենսգրքի նոր փոփոխություններով և լրացումներով, որոնք ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից 12.04.2024թ., ներառվել է նաև սեռով պայմանավորված խտրականության հիմքը՝ որպես ծանրացնող հանգամանք, սակայն իրավակիրառ պրակտիկայում հիշյալ ծանրացնող հիմքով վարույթներ չեն հարուցվում, այլ միայն «մերձավոր ազգական» ծանրացնող հիմքով:

- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 2024թ. փոփոխություններով չի սահմանվել բռնության ուժի և վերահսկողության մոտիվը: Գենդերային առումով չեզոք սահմանման պարագայում, որտեղ բացակայում է ուժի և վերահսկողության անիվի նկարագրությունը, հաճախ երկու անձինք՝ թե՛ կինը, թե՛ տղամարդը ընկալվում են որպես բռնարար: Այս պարագայում անհայտ է մնում, թե ով է զոհը: Հետևաբար, աղճատվում է նաև վիճակագրությունը: Այդպիսով՝ ավտոտնակի համար վիճող երկու եղբայրների ծեծը նույնպես ընկալվում է որպես ԸԲ՝ բացառելով ԸԲ գենդերային հիմքը: Օրենսդրական հիշյալ չեզոքության պայմաններում ոստիկանությունը հաճախ անհետաձգելի միջամտություն է կիրառում երկու կողմերին՝ հաշվի չառնելով, որ կինը, օրինակ, պարբերաբար բռնության է ենթարկվել, վերահսկվել է ամուսնու կողմից:

- ԸԲ դեպքերով վարույթներով առկա չէ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական հետապնդման բացառում: Սակայն իրավակիրառ պրակտիկայում դեռևս շարունակվում է այն պրակտիկան, երբ տուժող կնոջը նախաքննական մարմնում և դատարաններում հարցնում են՝ արդյոք բողոքը պնդում է, թե՝ ոչ:

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, իրավական ակտերի նախագծերը պետք է ենթարկվեն գենդերազգայության փորձաքննության, սակայն Ազգային ժողով[43] ներկայացված օրենսդրական նախագծերում, անգամ ամբողջական նոր օրենսգրքերի նախագծերում նման փորձաքննության չհանդիպեցինք:

- ՍԴՈ-1522 որոշման կատարման համատեքստում, ոստիկանությունը հաճախ չի քննարկում բռնություն գործադրող անձի հեռացումը տնից, այլ միանգամից կնոջն ու երեխաներին է առաջարկում ապաստարան, ինչը բարդացնում է կնոջ և երեխաների տեղաշարժի ազատությունը փակ ապաստարանային պայմաններում:

- ԸԲ ենթարկված կանայք բազմիցս ստիպված են լինում վերհիշել բռնության դեպքը, հարցաքննվել մի քանի անգամ:

- ԸԲ դեպքերով չի կիրառվում քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածը, ըստ որի բացառիկ դեպքերում, երբ առողջական վիճակի կամ այլ վայրում գտնվելու պատճառով անձի ներկայությունը քննչական գործողության կատարմանն անհնար է, կամ երբ առկա է անձի անվտանգությունն ապահովելու, կամ անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

- Նախկինում քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածով անչափահաս վկայի կամ տուժողի պարագայում, կարող էր կիրառվել նաև առանց մեղադրյալի ներկայության հարցաքննության անցկացում դատական պրոցեսի ժամանակ, սակայն հիշյալ դրույթը, որը բխում էր երեխայի լավագույն շահերից, հանվել է 2021թ. հուլիսի 1-ից գործող օրենսգրքից:

[43] http://parliament.am/drafts.php?lang=arm

- Քրեական օրենսգրքով փորձ է կատարվել «մերձավոր ազգական» հատուկ սուբյեկտի պատժի ու պատասխանատվության ներքո արտացոլել ընտանեկան բռնության կոնցեպտը, սակայն այն լիարժեք չի արտացոլում ընտանեկան բռնության ողջ սպեկտորը, քանի որ բացակայում է ԸԲ ուժի և վերահսկողության հայտնի անիվի հայեցակարգը:

- Ընտանեկան բռնության վիճակագրությունը իրական պատկերը չի արտացոլում, քանի որ օրենսդրորեն ամրագրված չէ ԸԲ ուժի և վերահսկողության բաղադրիչը, որպեսզի հստակ տարանջատում կատարվի և տարընթերցում չառաջանա (օրինակ, ներկայումս ընտանիքի անդամների միջև յուրաքանչյուր բնույթի վեճերի հետևանքով տարատեսակ բռնությունները դիտարկվում են որպես ընտանեկան բռնություններ. օրինակ՝ սեփականության վերաբերյալ եղբայրների միջև վեճի հետևանքով բռնությունը):

- Այսպիսով՝ հետազոտության շրջանակներում հիշյալ իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրահանգման՝ հաճախ իրավակարգավորումները գենդերային առումով չեզոք են, ուստի նման իրավակարգավորումների պայմաններում չի կարող արդյունավետորեն իրականացվել անուղղակի խտրականության բացառումը տվյալ պարագայում կանանց խմբի նկատմամբ:

Զինծառայողների իրավունքներ

- Հայաստանում դեռևս ընդունված չէ «Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենք, ձևավորված չէ հանձնաժողով, համակարգային խախտումների տարիների գործերը չեն վերանայվում:

- Թե՛ իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու (549 հոդված), թե՛ զինվորական պաշտոնեական անփութության (550 հոդված) հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառման հանցակազմ նախատեսված չէ: Այսինքն՝ հրամանատարները (պետերը) քրեական պատասխանատվություն չեն կրում: Սակայն առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար ենթակայության տակ գտնվող զինծառայողները (հրաման կատարել պարտավոր զինվորականները) ենթակա են պատասխանատվության («Հրաման չկատարելը» 516-րդ հոդվածի 1-ին մաս և «Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով» 517-րդ հոդվածի 1-ին մաս): Հիշյալ օրենսդրական դրույթները և իրավակիրառ քաղաքականությունը ենթադրյալ անուղղակի խտրականության կարող են հանգեցնել:

- Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ 549-550-րդ հոդվածների 1-ին մասերում նշված՝ *«անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին»* ձևակերպումը խիստ անորոշ է՝ անհասկանալի, թե երբ է վնասն էական համարվում: Ոչ գույքային վնասի էական համարելու չափորոշիչների բացակայությունն անուղղակի խտրական մոտեցում է պարունակում, թեև քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 15-րդ կետով ձևակերպված է էական վնաս հասկացությունը:

- Քրեական օրենսգրքի 518-րդ հոդվածով նախատեսված է՝ «Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ նրա պարտականությունների իրականացումը խոչընդոտելը» հանցակազմը: Սակայն ոչ հրամանատարի (պետի), այսինքն՝ ենթակա զինծառայողի պարտականությունների իրացմանը հրամանատարի (պետի) կողմից խոչընդոտելու

հանցակազմ նախատեսված չէ: Հիշյալ օրենսդրական դրույթը և իրավակիրառ քաղաքականությունը ենթադրյալ անուղղակի խտրականության կարող են հանգեցնել:

- ՀՀ քրեական օրենսգրքի «Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում» 521-րդ հոդվածով որպես հանցակազմ նախատեսված է՝ անձին հարվածներ հասցնելը կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելը կամ պարբերաբար նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը: Սակայն, նույն արարքները հրամանատարի (պետի) կողմից ենթակայի նկատմամբ կատարելն առանձնացված չեն, որպես հանցակազմեր: Գտնում ենք, որ սա նույնպես կարող է հանգեցնել անուղղակի խտրականության շարքայինների նկատմամբ:

Առաջարկություններ

Հետևաբար, արձանագրված վերը հիշատակված խնդիրներից բխող առաջարկություններն են՝

Կանանց իրավունքներ

- Հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը:

- Պատշաճ ու արդյունավետ քննություն իրականացնել իրավահավասարության խախտման վերաբերյալ վարույթներով:

- Քրեական վարույթներով դիտարկել նաև սեռով պայմանավորված խտրականության ծանրացնող հիմքերը ԸԲ դեպքերով քննություն իրականացնելիս:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի փոփոխություններով ընտանեկան բռնության սահմանման մեջ ներառել հետևյալ ձևակերպումը. ««Ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ հետամտումը, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև ուժի և վերահսկողության նպատակով»:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով ոչ նյութական վնասի հատուցում նախատեսել նաև իրավահավասարության իրավունքի խախտման պարագայում: Նախագծով նախատեսված է:

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, իրականացնել իրավական ակտերի նախագծերի գենդերազգայության փորձաքննություններ:

- Քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածը կրկին լրացնել հետևյալ փոփոխությամբ՝ անչափահաս վկայի կամ տուժողի պարագայում, կարող է կիրառվել նաև առանց մեղադրյալի ներկայության հարցաքննության անցկացում դատական պրոցեսի ժամանակ, որը բխում է երեխայի լավագույն շահերից /հանվել է 2021թ. հուլիսի 1-ից գործող օրենսգրքից/:

- ԸԲ դեպքերով կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածը, ըստ որի բացառիկ դեպքերում, երբ առողջական վիճակի կամ այլ վայրում գտնվելու պատճառով անձի ներկայությունը քննչական գործողության կատարմանն անհնար է, կամ երբ առկա է անձի անվտանգությունն ապահովելու, կամ անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

- Ի կատարումն ՍԴՈ-1522 որոշման՝ կահավորել ժամանակավոր կացարաններ բռնություն գործադրած անձանց համար, որի պարագայում ոստիկանությունը հաճախ ստիպված չի լինի բռնության ենթարկված կնոջն ու երեխաներին առաջարկել ապաստարան, ինչը բարդացնում է կնոջ և երեխաների տեղաշարժի ազատությունը փակ ապաստարանային պայմաններում:

- Առաջարկում ենք Սահմանադրական դատարանի որոշման լույսի ներքո նախ մանրակրկիտ տեղեկանալ՝ բռնություն գործադրած անձի այլ վայր տեղափոխվելու մատչելիության մասին: Եվ միայն բոլոր տարբերակները սպառելուց հետո քննարկել ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Զինծառայողների իրավունքներ

- Հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել «Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքի նախագիծը, ձևավորել հանձնաժողովը, համակարգային խախտումների տարիների գործերով սկսել վերանայումներ, որտեղ հատուկ բաժին կզբաղվի ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների տարիների վաղեմության գործերի վերանայմամբ նույնպես:

- Փոփոխել և լրացնել իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու (ՔՕ 549 հոդված), զինվորական պաշտոնեական անփութության (ՔՕ 550 հոդված) հանցակազմերը՝ որպես հետևանք նախատեսելով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառումը:

- Պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ 549-550-րդ հոդվածների 1-ին մասերում որոշակի ձևով սահմանել էական վնասի դեպքերն ու պայմանները:

- ՀՀ քրեական օրենսգրքի «Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում» 521-րդ հոդվածով որպես հանցակազմ նախատեսված է՝ անձին հարվածներ հասցնելը կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելը կամ պարբերաբար նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը: Քրեական օրենսգրքի փոփոխություններով ու լրացումներով ձևակերպել նույն արարքները հրամանատարի (պետի) կողմից ենթակայի նկատմամբ կատարել՝ որպես հանցակազմ:

Որակական հետազոտություն

Հետազոտության այս մասում ուսումնասիրվել են

- տեղեկատվության բաց հարթակներ,
- ընտանեկան բռնության դեպքերով վարչական ու քրեական վարույթներով 45 դատական ակտեր, որից՝ 25-ը քրեական վարույթներ, 20-ը՝ վարչական,
- զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով 28 դատական ակտերև 4 քրեական գործեր,
- հարցումներ են անցկացվել ընտանեկան բռնության ենթարկված 10 անձանց հետ:

Ընտանեկան բռնության դեպքերով վարույթներ

Դատական տեղեկատվական համակարգ՝ datalex.am

Դատական տեղեկատվական համակարգում՝ datalex.am կայքում, որը գործարկվել է 2008թ.-ին, առկա են այդ տարեթվից ի վեր ՀՀ դատարաններում քննվող և քննված քրեաիրավական, քաղաքացիաիրավական, վարչաիրավական և այլ ոլորտների թվայնացված գործեր:



- datalex.am տեղեկատվական համակարգի «Դատական գործերի որոնման» բաժնի «Վարչական» ենթաբաժնում 2018-ից մինչ օրս քննվել և/կամ քննվում է ՀԲ օրենքով սահմանված կարգով ՀԲ ենթարկված անձանց անհետաձգելի միջամտության որոշումների[44] վիճարկման 58 վարչական գործ: Անհետաձգելի միջամտության որոշումները բողոքարկում են հիմնականում բռնություն գործադրող անձինք:

[44] «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդված

- datalex.am տեղեկատվական համակարգի «Դատական գործերի որոնման» բաժնի «Քաղաքացիական» ենթաբաժնում 2018-ից մինչ օրս քննվել և/կամ քննվում է ԸԲ ենթարկված անձանց պաշտպանական միջոցի տրամադրման 116 վարույթ: Պաշտպանական որոշում ստանալու նպատակով քաղաքացիական դատարան են դիմում բռնության ենթարկված անձինք: ԸԲ օրենքի համաձայն, քաղաքացիական դատարանը, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, մինչև 6-12 ամիս ժամանակով սահմանում է պաշտպանության միջոց ԸԲ ենթարկված անձի համար:

- datalex.am տեղեկատվական համակարգի «Դատական գործերի որոնման» բաժնի «Քրեական» ենթաբաժնում 2018թ.-ից մինչ օրս քննվել և/կամ քննվում է պաշտպանական և/կամ անհետաձգելի որոշումների խախտման 120 քրեական վարույթ:

- datalex.am տեղեկատվական համակարգի «Դատական գործերի որոնման» բաժնի «Քրեական» ենթաբաժնում 2022թ.-ից մինչ օրս քննվել և/կամ քննվում է մերձավոր ազգականի կողմից կատարված հանցագործության 220 քրեական վարույթ:

- datalex.am տեղեկատվական համակարգի «Խելացի որոնման» բաժնում 2008թ.-ից մինչ օրս քննվել և/կամ քննվում է ծեծի հանցակազմով 1743 քրեական վարույթ, սակայն առանձնացված չէ, թե դրանցից քանիսն են ընտանեկան բռնության դեպքերով:

Նույն խնդիրը վերաբերում է նաև քրեական օրենսգրքի մյուս հոդվածներին, որոնցով առավել հաճախ են հարուցվում ԸԲ դեպքերով քրեական վարույթները:

- datalex.am տեղեկատվական համակարգը չի թարմացվում 2024թ. հունիս ամսից. Դատական դեպարտամենտից տարածած տեղեկատվության համաձայն, տեղեկատվական համակարգը սպասարկող սերվերի վրա ջուր է լցվել: Տեղեկատվական համակարգը վերջին երկու տարիներին խափանումներով էր աշխատում էլեկտրաէներգիայի պատճառով: Վերջին շրջանում սկսվել են որոշակի թարմացումներ արվել:

Եզրակացությունն այն է, որ դատական տեղեկատվական համակարգում համապարփակ կերպով առկա չէ վիճակագրություն ԸԲ դեպքերով գործերի մասին: Հետևաբար, որևէ կերպ հնարավոր չէ կայքի մոնիթորինգի արդյունքում ԸԲ դեպքերով կոնկրետ տվյալներ վեր հանել:

Ընտանեկան բռնության դեպքերով քրեական վարույթների ուսումնասիրություն

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է ընտանեկան բռնության դեպքերով 25 քրեական գործ՝ դատավճիռներ և որոշումներ: Ուսումնասիրված գործերի շրջանակներում արձանագրվել է հետևյալը.

1. Բռնություն գործադրվել է և /կամ/ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չի կատարվել՝

- 8 դեպքով նախկին կնոջ նկատմամբ,
- 9 դեպքով կնոջ նկատմամբ (փաստական ամուսնության մեջ գտնվող),
- 1 դեպքով նախկին նշանածի նկատմամբ,
- 2 դեպքով հղի կնոջ նկատմամբ,
- 3 դեպքով կանայք են «փոխադարձ» մեղադրվել՝ ամուսնու նկատմամբ ֆիզիկական ներգործության համար (արդարացվել է), երեխային ծեծելու համար (ճանաչվել է անմեղ), առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար (գործը կարճվել է՝ հաշտության հիմքով),

- 2 գործով կանանց նկատմամբ հարուցվել է քրեական գրոծ՝ սուտ մատնության հիմքով:

2. Կանանց նկատմամբ «փոխադարձ» հարուցված գործերը

Ընտանեկան բռնության գործերում Եվրոպական դատարանը նույնպես պետությանը պատասխանատու է համարում տուժողների պաշտպանության համար, մասնավորապես, երբ բռնության վտանգը հայտնի է եղել պետական պաշտոնյաներին կամ վերջիններս չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ տուժողներին պաշտպանելու համար[45]: Պատահական չէ, որ ընտանեկան բռնության գործերը Հայաստանում 2021թ.-ից քննվում են հանրային կարգով, և պայմանավորված չեն տուժողի բողոքով: Սակայն իրավակիրառ պրակտիկանում լինում են նաև դեպքեր, երբ կանայք տուժողից դառնում են մեղադրյալ, եթե համարձակվել են, օրինակ, ինքնապաշտպանվել:

Տուժող Ա.Ե.-ին նույնպես մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, սակայն դատարանի դատավճռով նա արդարացվել է: **Սույն գործով նախաքննության մարմինը, դատախազությունը շարունակել են Աստղիկ Եղիազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը բողոքարկվել էր Վերաքննիչ դատարան: Վերջինս մերժել է բողոքը և առաջին ատյանի դատավճիռը թողել անփոփոխ:**

Ա.Ե.-ն վարույթի ընթացքում տուժողից, զոհից վերածվել էր մեղադրյալի, և առաջին ատյանի դատարանում անհամաչափորեն գտնվում էր ընտանիքում բռնություն գործադրած անձի՝ մյուս մեղադրյալի (իր նկատմամբ բռնություն գործադրած տղամարդու) հետ նույն աթոռին:

Պրակտիկայում լինում են նաև այսպիսի դեպքեր, երբ ընտանեկան բռնության մասին բարձրաձայնող կանայք՝ իրենց իրավունքների պաշտպանության ժամանակ, իրենք են քրեական հետապնդման ենթարկվում: Նման վարույթները հիմնականում կարճվում են արդարացնող հիմքերով: Սակայն լինում են դեպքեր, երբ վարույթները մեղադրական եզրակացությամբ հասնում են դատարաններ:

Ոստիկանությունը նույնպես հաճախ նման դեպքերում երկու անձի նկատմամբ կայացնում է ԸԲ օրենքով սահմանված միջամտություն: Այսինքն՝ թե՛ կինը, թե՛ տղամարդը դառնում են զոհ և բռնություն գործադրող անձինք միևնույն ժամանակ: Ոստիկանությունը վկայակոչում է ԸԲ օրենքը, որտեղ ուժի և վերահսկողության մասին որևէ ձևակերպում առկա չէ:

Գալով կոնկրետ վարույթին՝ առկա էր իրավական կազուս, քանի որ վարույթում փաստացի չկար տուժող կողմ, այլ կային երկու մեղադրյալներ: Երկուսն էլ՝ ամուսինն էլ, կինն էլ մեղադրվում էին ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ ֆիզիկական ներգործությունը, որը կատարվել է մերձավոր ազգականի կողմից: Այնինչ, Դատարանում հետազոտված ապացույցներով պարզ դարձավ, որ կա տուժող, ով պաշտպանվել է ամուսնու հարվածներից:

Մեկ այլ գործով ընտանեկան բռնության ենթարկված՝ տուժող Ա. Մ.-ին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա ծեծել է իր մանկահասակ դստերը՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Ա.Մ.-ն ճանաչվել և հռչակվել էր անմեղ՝ հանցակազմի բացակայության հիմքով:

---

[45] «Բևացկուան ընդդեմ Բուլղարիայի», «Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի», «Հաջդուովան ընդդեմ Սլովակիայի», Քալուցան ընդդեմ Հունգարիայի, Բ.-ն ընդդեմ Մոլդովայի գործերով վճիռները

Ընտանեկան բռնության ենթարկված՝ տուժող Հ.Ս.-ին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա քաղաքացիական գործով կայացված վճռի և հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ կայացված որոշման հիման վրա՝ երեխաներին տեսակցելու ժամանակ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում ոլորել է իր նախկին ամուսնու ձախ ձեռքի հինգերորդ մատը, նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով միջին ծանրության վնաս: Քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

2 գործ հարուցվել է՝ կանանց կողմից սուտ մատնության հիմքով: Այս գործերով դատաքննությունները շարունակվում են:

Ռ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա կատարել է սուտ մատնություն (զանգահարել է ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն և հայտնել է, որ վիճաբանության ընթացքում ամուսինը՝ Ա.Ա.-ն իրեն ծեծի է ենթարկել): Ըստ ոստիկանության նյութերի՝ կինը ամուսնու հետ վիճաբանությունը չշարունակելու, նրան սաստելու համար է զանգահարել ոստիկություն: Մեղադրանքը հաստատել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունը: 19. 04. 2022թ. կայացվել է որոշում՝ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Պարբերաբար՝ միջինը 3-4 ամիսը մեկ նշանակվել և կայացել են դատական նիստեր և դատաքննությունը մինչ օրս շարունակվում է:

Ա.Մ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա կատարել է սուտ մատնություն: Նույն պատկերը՝ ըստ ոստիկանության նյութերի՝ կինը ամուսնու հետ վիճաբանությունը չշարունակելու, նրան սաստելու համար է զանգահարել ոստիկություն: Մեղադրանքը հաստատել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունը: 28. 06. 2022թ. կայացվել է որոշում քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Պարբերաբար՝ միջինը 2 ամիսը մեկ նշանակվել և կայացել են դատական նիստեր և դատաքննությունը մինչ օրս շարունակվում է:

3. Ուսումնասիրված գործերով առաջադրված մեղադրանքների (դատավճիռների) հիմքում հետևյալ հանցակազմերն են *(Հավելված 1)*՝

- **9 գործ՝ ֆիզիկական ներգործություն հանցակազմով (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված): 9 գործից 7-ի հիմքում** ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցակազմ: Մեկ գործով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ): Մեկ գործով՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով և երկու դրվագ 508-րդ հոդվածի 1-ին մասով:
- **4 գործ՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելը** (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 167. 1 հոդված, համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածին): 4 գործից՝ 3-ով քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել է վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:
- **3 գործ՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը** (ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին մաս, նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդված): Ներառված է վերը հիշատակված գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով և երկու դրվագ 508-րդ հոդվածի 1-ին մասով:

- **1 գործ՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը** (ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ)։
- **1 գործ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիք** (2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մաս)
- **4 գործ՝ ծեծի հանցակազմով** (2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված). մեկով՝ գործը կարճվել է՝ հաշտության հիմքով, երկու գործով՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմոքվ, մյուսով՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի չվերացված որոշման առկայությամբ։
- **1 գործ՝ մարդուն առևանգելը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** (2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրվում է երեք անձ նույն գործով)։ Գործը դատարանում ստացվել է 29. 09. 2020թ. և մինչ օրս դատաքննությունը շարունակվում է։
- **2 գործ՝ սուտ մատնության** (ՀՀ քրեական օրենսգրքo 476-րդ հոդված) հիմքով մեղադրանքներ են ներկայացվել կանանց։ Այս 2 գործով 2 տարի է դատաքննություններ են ընթանում, որի մասին վերը հիշատակվել է։

4. Կիրառված խափանման միջոցները *(Հավելված 2)*

- Բացակայելու արգելք (ստորագրություն չհեռանալու մասին)՝ 21 գործով
- Խափանման միջոց չի կիրառվել՝ 2 գործով
- Տնային կալանք՝1 գործով
- Որպես խափանման միջոց ընտրված բացակայելու արգելքը փոխվել է և կիրառվել վարչական հսկողություն խափանման միջոցը՝ 1 գործով
- 5 կանանց նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը
- 2 վերաբերյալ դատաքննությունները շարունակվում են,
- 2 կին արդարացվել է,
- մեկի վերաբերյալ գործը կարճվել է՝ հաշտության հիմքով։

5. Նշանակված պատիժներ

→ **ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով** նախատեսված հանցանքում մեղավոր ճանաչված անձինք դատապարտվել են հետևյալ կերպ։

- Մեկ գործով՝ կարճաժամկետ ազատազրկման՝ 1 (մեկ) ամիս ժամկետով և ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով։
- Մեկ այլ գործով՝ որպես պատիժ նշանակվել է կարճաժամկետ ազատազրկում՝ 2 (երկու) ամիս ժամկետով և նորից պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով։
- Մեկ այլ գործով՝ կարճաժամկետ ազատազրկման ձևով՝ 2 (երկու) ամիս ժամկետով և պայմանականորեն չի կիրառվել՝ սահամանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով։
- Մեկ այլ գործով՝ կարճաժամկետ ազատազրկում՝ 1 (մեկ) ամիս ժամկետով և նորից պայմանականորեն չի կիրառվել և սահմանել է փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով։ Մեկ այլ գործով՝ նշանակվել է պատիժ՝ հանրային աշխատանքներ 150 /հարյուր հիսուն/ ժամ տևողությամբ։
- Մեկ այլ գործով՝ նշանակվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի՝ 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամի չափով։

- Մեկ այլ գործով նույնպես նշանակվել է տուգանք։
- Մեկ այլ գործով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/ դատապարտվել է տուգանքի՝ 100.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով։
- Մեկ այլ գործով՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մաս և երկու դրվագ 353. 1-րդ հոդվածով նշանակվել է պատիժ՝ տուգանքի ձևով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200.000 ՀՀ դրամ և ազատազրկում՝ 5 /հինգ/ ամիս 12 /տասներկու/ օր ժամկետով։ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ ազատազրկման ձևով պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը և ազատության զրկման հետ կապված պատժատեսակը՝ 5 /հինգ/ ամիս 12 /տասներկու/ օրը, համարվել կրած՝ թողնելով կրելու տուգանք՝ երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով և նշանակված պատիժը տարաժամկետել 1 /մեկ/ տարի ժամկետով /կիրառվել է համաձայնեցման վարույթ/։

Այսպիսով՝ ֆիզիկական ներգործության հանցակազմով 9 գործով՝ կարճաժամկետ ազատազրկումները բոլոր դեպքերում պայմանականորեն չեն կիրառվել, այլ դեպքերում նշանակվել է տուգանք։

→ **2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 167. 1 հոդվածով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածին)** մեղադրանքները ունեցել են հետևյալ ելքը՝ երեք գործով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով և քրեական գործի վարույթը կարճվել։

Մեկ այլ գործով՝ դատաքննության փուլում, մեղադրող Ա. Մ.-ն հայտարարել է ամբաստանյալ Բ.Դ.-ին առաջադրված մեղադրանքից հրաժարվելու մասին, պատճառաբանելով, որ վերջինիս մասնակցությունը նրան մեղսագրվող արարքին հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված չէ և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները։

19. 04. 2021թ. դատավճռով Բ.Դ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 167. 1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացվել է, ճանաչվել և հռչակվել անմեղ՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ։

Առաջադրված մեղադրանքում Բ.Դ.-ն իրեն մեղավոր չի ճանաչել և դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ի սզբանե համաձայն չի եղել կատարողական թերթի պահանջների հետ և բազմիցս հայտարարել է, որ բողոքարկելու է այն և չի պատրաստվում կատարել դրա պահանջները։

Տուժողը դատաքննության ժամանակ շեշտել է, որ՝ «դատարանի որոշման պահանջները Բ.Դ.-ն խախտել է և խոչընդոտել է իր տեսակցություններին»։

Արդարացման դատավճիռը կայացվել է դատաքննության փուլում միայն մեղադրանքից դատախազի հրաժարման հիմքով։

Հետևություն՝ ուսումնասիրված գործերի շրջանակում՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու համար որևէ անձ չի դատապարտվել։ Գործերը կարճվել են վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով։

→ **ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանքներով դատաքննությունները ավարտվել են՝**

նշանակվել է տուգանք՝ 340.000 (երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով (թույլատրվել է նշանակված տուգանքը մաս առ մաս վճարել 1(մեկ) տարվա ընթացքում), մեկ այլ գործով՝ տուգանք նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի /400.000 ՀՀ դրամի/ չափով և վճարելու համար սահմանել 10 ամիս ժամկետ՝ յուրաքանչյուր ամսում 40.000 ՀՀ դրամ վճարելու պայմանով, մեկ այլ գործով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ (այս գործով ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամբաստանյալ Գ.Ենգոյանի հետ տուժող Ա.Նիկողոսյանի հաշտվելու հիմքով)։

→ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով /առողջությանը պատճառել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով/ նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղավոր է ճանաչվել և որպես պատիժ նշանակվել է հանրային աշխատանքներ՝ 150 (հարյուր հիսուն) ժամ տևողությամբ։

→ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է կարճաժամկետ ազատազրկման և սահմանվել է տուգանք։

→ ծեծի հանցակազմով 4 գործերից (2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված)՝ մեկով՝ գործը կարճվել է՝ հաշտության հիմքով, երկուսով՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմոքվ, մեկով՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի չվերացված որոշման առկայությամբ։ Այս վերջին գործով Տիգրան Հրաչյայի Սուքիասյանը մեղադրվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը)։ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասով բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ մասով քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության։

→ մարդուն առևանգելը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ (2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրվում է երեք անձ նույն գործով). գործը դատարանում ստացվել է 29. 09. 2020թ. և մինչ օրս դատաքննությունը շարունակվում է։

→ սուտ մատնություն հիմքով 2 կանանց ներկայացված մեղադրանքներով գործերը 2-րդ տարին է շարունակվում են։

6. Կիրառված դատավարական հատուկ ընթացակարգերը և կարճված գործեր

Ավարտված 20 քրեական գործերի շրջանակներում՝

- 4 համաձայնեցման վարույթ (մեկ գործով տուժողը դեմ է եղել, սակայն բանակցության կողմ չէ, իսկ դատախազը կողմ է եղել համաձայնեցման վարույթին)
- 3 արագացված վարույթ (մեկ գործով՝ տուժողը հաշտվել է, 2 գործով՝ մեղադրողը և տուժողը չեն առարկել)
- 5 գործ կարճվել է (4-ը վաղեմության հիմքով, մեկը՝ հաշտության)։

Թիվ ԵԴ/0449/01/21 քրեական գործով 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 167. 1 հոդվածով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածին) քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով և գործի վարույթը կարճվել է։ **Այսինքն՝ 08. 04. 2021թ. հաստատված**

մեղադրական եզրակացությամբ գործը դատարան ստանալուց հետո՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով դատարանը 26. 09. 2022թ. որոշում է կայացրել գործի վարույթը կարճելու մասին, այն է՝ 1 տարի 5 ամիս 18 օր անց:

Եվս նմանատիպ գործ՝ տուժող Ն.Նարգիզյանն առարկել է Լ.Մեսրոպյանի նկատմամբ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով՝ քրեական հետապնդման դադարեցման դեմ, պատճառաբանելով, որ Լ.Մեսրոպյանը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության: 2019թ. հուլիսի 20-ին ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17865419 քրեական գործը:
2020թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ Լևոն Մեսրոպյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրվա որոշմամբ վերջինիս նկատմամբ
2020թ. հոկտեմբերի 08-ին թիվ 17865419 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև Դատարան) և ընդունվել է Դատարանի վարույթ: **Այսինքն՝ ոստիկանությունում քրեական գործ հարուցելուց հետո՝ մեկ տարի 25 օր անց է միայն՝** 2020թ. սեպտեմբերի 25-ի որոշում կայացվել Լևոն Շավարշի Մեսրոպյանին որպես մեղադրյալ ներգրավվելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածի 1-ին մասով: 2020թ. հոկտեմբերի 08-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարանը 13. 07. 2021թ. , այն է **9 ամիս 5 օր** անց է որոշում կայացրել:

Մեջբերում 27. 10. 2021թ. դատավճռից՝ տուժող Նազիկ Բաբայանի ցուցմունքից՝ « 2016 թվականին օգոստոս ամսին ծագած վեճի հետևանքով, ինքը /կապտուկներով/ սեպտեմբեր ամսին դիմել է ոստիկանություն, որից հետո քրեական գործ է հարուցվել, սակայն ինքը բողոքից հրաժարվել է, քանի որ ասել են, որ նրան ոչինչ չի սպառնում, իսկ ինքն ընդամենը ցանկացել է, որ Գ.Հարությունյանն իրեն ուղղակի չանհանգստացնի: Անցած չորս տարիների ընթացքում ինքը անընդհատ դիմել է ոստիկանություն, որից հետո 2019 թվականի դեկտեմբերի 20-ին դատարանը որոշում է կայացրել պաշտպանական միջոց կիրառելու մասին»:

Հետևություն՝ հաճախ նախաքննությունն և /կամ/ դատաքննությունն չհիմնավորված ձգձգվում են, որի հետևանքով անցնում են վաղեմության ժամկետները և գործերը կարճվում են:

Ընտանեկան բռնության դեպքերով վարչական վարույթները

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության որոշումները ենթադրյալ բռնություն գործադրած անձանց կողմից ՀՀ Վարչական դատարանում բողոքարկված 20 գործ 2018-2024թթ. ընթացքում: Ամփոփ արդյունքները ստորև:

1. 20 գործից 13-ը վերաբերում են «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումներին և 7-ը «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ» որոշումներին:

2. Ուսումնասիրված 20 գործերով ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ ՀՀ

ոստիկանության որոշումներից 16-ը ՀՀ Վարչական դատարանը ճանաչել է անվավեր կամ ոչ իրավաչափ։ Այդ 16 գործից միայն 1 գործով է առաջին ատյանի դատարանը մերժել ոստիկանության որոշման դեմ հայցադիմումը, սակայն ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը և անվավեր ճանաչել ոստիկանության որոշումը։ 20 գործից միայն 2 գործով անվավեր չի ճանաչվել ոստիկանության որոշումները (մեկ գործով մերժվել է հայցադիմումի պահանջի բավարարումը և մեկ գործով հայցադիմումը վարույթ չի ընդունվել պահանջի ոչ ճիշտ ձևակերպման պատճառաբանությամբ)։ 2 գործ դեռ ընթացքի մեջ է՝ թիվ ՎԴ6/0536/05/24 , ՎԴ/6462/05/24 գործը։

3. Ուսումնասիրված 20 գործերից՝

- 1 գործ 2018թ,
- 3 գործ 2021թ,
- 3 գործի ընթացքն եղել է 2021-2022թթ,
- 1 գործ 2021-2023թթ. ընթացքում,
- 5 գործ 2022թ,
- 3 գործ 2023թ,
- 4 գործ 2024թ։

4. Ուսումնասիրված 20 գործերով ընտանիքում ենթադրյալ բռնություն կիրառած անձանցից

- 19-ը տղամարդ է
- 1-ը կին։

5. Ընտանեկան բռնության 20 գործով դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է՝

- 8 գործով պատասխանող կողմը (ՀՀ ոստիկանություն) դատարան չի ներկայացրել հայցադիմումի պատասխան կամ որևէ առարկություն (չի հայտնել որևէ իրավական դիրքորոշում) և հրավիրված դատական նիստերին չի ներկայացել (դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված պատասխանող կողմը չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին)։ Պատասխանողը Դատարանի պահանջով միայն ներկայացրել է վարչական վարույթի նյութերը։

- Մեկ գործով (գործ N: ՎԴ/1489/05/22, 22 հուլիսի 2022թ. դատական ակտ, դատավոր Ելենա Առաքելյան) դատական ակտում ոչ մի նշում չկա պատասխանողի դիրքորոշման կամ դատարան ներկայանալու մասին։

- 9 գործով պատասխանող կողմի ներկայացուցիչը (լիազորված անձը) ներկայացել է դատարան և հայտնել բանավոր դիրքորոշում, սակայն դատական ակտերում գրավոր պատասխանի մասին կամ հիշատակում չկա կամ նշվում է, որ պատասխանողը հայցադիմումի գրավոր պատասխան կամ որևէ գրավոր իրավական դիրքորոշում չի ներկայացրել։

6. Ուսումնասիրված 20 գործերից 16 գործով ոստիկանության որոշումներն անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ վճիռներով, որպես նախապես վճարված պետական տուրքի հատուցում հօգուտ հայցվոր կողմի (ենթադրյալ բռնություն կիրառած անձին) ոստիկանությունից բռնագանձվել է յուրաքանչյուր գործով 4000-ական ՀՀ դրամ մինչև 2021թ.

օրենսդրական փոփոխությունը, իսկ հետագայում 10000-ական ՀՀ դրամ: Բացի այդ, այն գործերով, որտեղ ենթադրյալ բռնարարի շահերը պաշտպանել է ներկայացուցիչը, ապա նրա վճարի փոխհատուցումը նույնպես բռնագանձվել է ոստիկանությունից:

7. Ուսումնասիրված գործերի շրջանակներում ենթադրյալ բռնության ենթարկված կանանցից միայն երկուսն են առաջին ատյանի դատարանի վճիռները բողոքարկել վերաքննության կարգով, սակայն վերաքննիչ բողոքները մերժվել են:

ՀՀ վարչական դատարանների իրավական դիրքորոշումները և դրանց ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրված գործերով «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» ոստիկանության որոշումներով կիրառվել է բռնության ենթարկված անձի որոշակի օրերի ընթացքում (որպես կանոն 20 օր ժամկետով) մոտենալու արգելքով: Հետազոտված 20 գործերից 16 գործով (2 գործ դեռ ընթացքի մեջ է) ենթադրյալ բռնություն կիրառած անձանց հայցերը բավարարվել են՝ ոստիկանության որոշումները անվավեր կամ ոչ իրավաչափ են ճանաչվել: Ստորև մի քանի գործերով կայացված վճիռներից բերված են դատարանների հիմնավորումները, որոնք գրեթե նույնական կրկնվում են բոլոր դատական ակտերում:

- Օրինակ, Վարչական դատարանը ՎԴ/6722/05/21 գործով (դատավոր Գրիգոր Առաքելյան, հայցվոր Էդգար Աֆրիկյան, 28.10.2021թ. վճիռ) անվավեր է ճանաչել ոստիկանության որոշումը: Վարչական դատարանն արձանագրել է, որ ոստիկանությունը անհետաձգելի միջամտության որոշում կայացնելիս պարտավոր էր գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնել, այդ թվում՝ պարզել նաև վնասվածքների վաղեմությունը և այլ հանգամանքներ, իսկ որոշում կայացնելիս չխախտել անմեղության կանխավարկածը:

Սակայն վնասվածքների առաջացման ծանրությունը, մեխանիզմը պարզելու համար հարկավոր է նշանակել և իրականացնել դատաբժշկական փորձաքննություն, որը մի քանի օր է տևելու: Սակայն, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշումը ոստիկանության իրավասու ծառայողն կայացնում է անհապաղ: Հետևաբար, ոստիկանությունը սահմանափակված լինելով օրենքով ամրագրված «անհապաղ» ժամկետով, փաստացի անկարող է իրականացնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն: Ավելին, ոստիկանությունը անհետաձգելի միջամտության որոշում կայացնելիս չունի նման քննություն իրականացնելու պարտականություն: Ոստիկանությունը պարզապես օպերատիվ կերպով լուծում է անվտանգային խնդիր և կատարում կանխարգելիչ ֆունկցիա:

Ինչ վերաբերում է դատական ակտում նշված անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանմանը, ապա այն ակնհայտորեն վերաբերելի չէ անհետաձգելի միջամտության որոշումն անհապաղ կիրառելու օրենքով սահմանված պարտականությանը: Տվյալ որոշումները կայացնելիս ոստիկանությունը պարտավոր չէ անմեղության կանխավարկածի սկզբունքով առաջնորդվել, ինչպես նախաքննության իրականցման ժամանակ նախաքննական մարմինը կամ դատավճիռ կայացնելիս դատարանը (ոստիկանությունը ո՛չ մեղադրանք է առաջադրում և ո՛չ էլ դատապարտում):

Այլապես, գրեթե անիրականալի է դառնում օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության ինստիտուտը և ընտանեկան բռնության ենթարկված կանայք հայտնվում են անպաշտպան վիճակում: Որպիսի փաստն էլ արձանագրել ենք հետազոտության արդյունքում:

Առանձնակի ուշադրության է արժանի նույն դատական ակտի հիմքում դրված հետևյալ հիմնավորումը՝ «*Իսկ այն հանգամանքը, որ Լալա Անդրանիկի Մանուկյանի հաղորդման առթիվ և նյութերի նախապատրաստմամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա հարուցվել է քրեական գործ, ապա դատարանը նշում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու փաստը դեռևս բավարար չէ բռնության կիրառման փաստը հաստատված համարելու համար, ուստի Դատարանը գտնում է, որ այդ փաստարկն այս կամ այն կերպ չի կարող հիմք հանդիսանալ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը հաստատելու համար* »:

Այսինքն, դատարանը գտել է, որ նույնիսկ դեպքով քրեական գործի հարուցված լինելը նույնպես չի կարող բավարար հիմք հանդիսանալ իրավաչափ համարելու համար ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության որոշում կայացնելը: Այնինչ քրեական գործի հարուցումն այլ գործընթաց է, և որևէ օրենքով ընտանեկան բռնության գործերով պաշտպանության միջոցների կիրառումը պայմանավորված չէ քրեական գործ հարուցելով և գործի ելքով: Սրանք տարբեր ինստիտուտներ են, տարբեր գործիքակազմեր, գործընթացներ և տարբեր նպատակներ ունեն: Ավելին, դատարանի նման մոտեցմամբ ստացվում է, որ ընտանեկան բռնության գործերով բռնություն գործադրած անձի նկատմամբ չի կարող պաշտպանության միջոց՝ ահհետաձգելի միջամտություն կիրառվել, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ: Այլ կերպ ասած՝ քանի դեռ չկա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Այս գործով ուշագրավ է, որ դատական ակտում չկա հիշատակում ընտանեկան բռնության ենթարկված Նոնա Սահակյանին և նրա մորը՝ Լ.Մանուկյանին, որպես երրորդ անձ դատավարությանն մեջ ներգրավելու մասին:

Վարչական դատարանի կողմից ոստիկանության որոշումներն անվավեր ճանաչելն այս հիմքերով ակնհայտորեն հանգեցնում է հենց նման քաղաքականության որդեգրմանը: Այս իրողությունը գործնականում անկենսունակ է դարձնում ԸԲ օրենքի ամրագրված ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության համար նախատեսված իրավադրույթները:

- Վարչական դատարանի (առաջին ատյան) կողմից մեկ այլ գործով (գործ N: ՎԴ/8596/05/18, դատավոր Արթուր Ռաֆայելի Ավագյան, հայցվոր Արթուր Գևորգյան, պատասխանող՝ ՀՀ ոստիկանություն) հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ պատճառաբանելով, որ ոստիկանության 25.07.2018 թվականի որոշումն այլևս իրավաբանական ուժ չունի (ժամկետը լրացել է), ուստի չի հանդիսանում միջամտող վարչական ակտ, իսկ միջամտող վարչական ակտի բացակայության պայմաններում նման հայցը ենթակա չէ դատարանում քննության: Սակայն, Վերաքննիչ վարչական դատարանի (դատավոր Անի Գրիգորի Հարությունյան) 02.11.2018թ. վճռով Արթուր Գևորգյանի հայցն ընդդեմ Ոստիկանության, երրորդ անձ Ջեմմա Միրզոյան, բավարարել է՝ վերացվել է ոստիկանության որոշումը: Ոստիկանությունից հօգուտ Արթուր Գևորգյանի բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

Մեջբերում Վերաքննիչ վարչական դատարանի վճռից՝ «Նախ և առաջ պետք է նշել, որ Հայցվորը հերքում է Որոշմամբ արձանագրված փաստերը, որոնց համաձայն ինքը 02.07.2018թ. ձեռքերով մի քանի անգամ հարվածել է կնոջը և դստերը, իսկ 25.07.2018թ. ժամը 17.30-ի սահմաններում

փորձել է բռնի կերպով տանել երեխաներին և վնասվածքներ է պատճառել աներոջը: /.../ Որոշումը կայացվել է հայցվորի կողմից բռնության գործադրման դեպքի բացակայության պայմաններում և հասկանալի չէ, թե ինչ փաստերով կամ ապացույցներով են հաստատվում բռնության գործադրման դեպքը և Որոշման մեջ նկարագրված գործողությունները: Բացի այդ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ «Օրենք») 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշումը ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոց է, որի կիրառման մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Որոշման կայացման իրավական հիմքը Օրենքի 7-րդ հոդվածն է, որի 1-ին մասի համաձայն Որոշումը կայացվում է, եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև»: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքում բռնության տեսակ է ֆիզիկական բռնությունը, որի տակ հասկացվում է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը: Որոշման նկարագրական մասում նկարագրված է հենց ֆիզիկական բռնությունը: Օրենքի իմաստով Որոշման մեջ նկարագրված գործողությունները ոչ այլ ինչ են, քան հանցագործություններ, որոնց հանցակազմերը սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ, 113-րդ, 117-119-րդ և 133-րդ հոդվածներով: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական բռնությունը փաստելու համար անհրաժեշտ է փաստել ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածներով սահմանված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքների կատարման փաստը, ինչը հնարավոր է միայն հարուցված քրեական գործի առկայության պայմաններում համապատասխան արարքները կատարելու մեջ անձի մեղավորությունը ճանաչող օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության դեպքում, որոնք տվյալ իրավիճակում բացակայում են: Ավելին, Որոշումը կայացնելու օրվանից մինչև սույն հայցադիմումը դատարան ներկայացնելու օրը Որոշման մեջ նշված փաստերի հիման վրա քրեական դատավարության շրջանակներում, անգամ, նյութեր չեն նախապատրաստվել: Շարադրվածից հետևում է, որ Որոշումը Հայցվորի կողմից բռնության կիրառման փաստի մասով, հետևաբար նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահամնված հիմքի մասով, անհիմն է»:

Ինչպես տեսնում ենք՝ դատարանը գտնում է, որ ոստիկանությունը բռնության գործադրման դեպքը պետք է հաստատի կոնկրետ փաստերով և ապացույցներով: Ավելին՝ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու համար դատարանը համարում է, որ անհրաժեշտ է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը:

Այսպիսով, ինչ վերաբերում է ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության որոշում կայցնելիս՝ բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության մասին ենթադրությունները չհիմնավորված կամ ոչ բավարար հիմնավորված լինելուն, ապա, կարծում ենք, որ այս հարցում ոստիկանությունը պարտավոր է ձեռնարկել

միջոցներ, թեկուզև սեղմ ժամկետում այդ ենթադրություններն հիմնավորելու համար։ Նույնը վերաբերում է նաև կոնկրետ հեռավորություն և ժամկետ սահմանելու հիմնավորվածություններին։

- Մեկ այլ գործով Վարչական դատարանն առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ գտել է, որ ոստիկանությունը գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և ճիշտ պարզելու պարտականություն ունի և նախազգուշացում կիրառելու համար պետք է բավարար ապացույցներ լինեն։ Այ սգործով նույնպե հայցվորի պահանջը բավարարվել է՝ ոստիկանության որոշումն անվավեր է ճանաչվել։

Մեջբերում 27.12.2022թ. վճռից (գործ ՎԴ2/0150/05/22, դատավոր Ա.Մկրտչյան)՝ Դատարանը փաստում է, որ վարչական մարմինը, խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, չի իրականացրել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և ճիշտ պարզելու պարտականությունը և առանց բավարար ապացույցների հաստատել է նախազգուշացում կիրառելու համար անհրաժեշտ փաստերի առկայությունը, ինչի արդյունքում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի սխալ կիրառման հետևանքով ընդունել վիճարկվող որոշումը։ Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված հիմքով ենթակա է անվավեր ճանաչման»։

Այս գործով դատարանը, փաստացի պարտադիր չի համարել անմեղության կանխավարկածի կիրառումը, նթադրյալ բռնության դեպքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը և ապացուցումը։ Այլ կերպ ասած՝ Դատարանը այս գործով պարզապես գտել է, որ ոստիկանությունը պարտավոր էր նախազգուշացում կիրառելու վերաբերյալ որոշման հիմքում դներ բավարար ապացույցներ և փաստական հանգամանքները ամբողջությամբ և ճիշտ պարզեր։

Վարչական դատարանի այս հիմնավորումն էականորեն տարբերվում է այլ վճիռներով բերված հիմնավորումներց (անմեղության կանխավարկածով առաջնորդվելու պահանջ, դատական ակտի առկայություն և այլն)։ Գտնում ենք, որ նման մոտեցմամբ Դատարանը հիմնավոր կերպով ոստիկանության պարտականությունն է համարում պաշտպանության վերաբերյալ որոշումները հիմնավորել ոչ միայն ենթադրյալ բռնության ենթարկված անձի ահազանգով (հայտարարությամբ, բացատրություններով)։ Այսինքն՝ անհրաժեշտ է, թեկուզև սեղմ ժամկետներում, հավաքել հնարավոր ապացույցները (օրինակ՝ լուսանկարել վնասվածքները, բացատրություններ վերցնել ականատեսներից և/կամ դեպքի և դրան վերաբերող ընտանեկան հարաբերությունների մասին տեղեկություններ ունեցող անձանցից և այլն)։ Անհրաժեշտ է նաև անհետաձգելի միջամտության որոշումներում հիմնավորել կիրառվող միջոցի անհրաժեշտությունը (չմոտենալու ժամկետի և տարածության հիմնավորում)։

- Մեկ այլ գործով (N: ՎԴ/1253/05/23, դատավոր Ռոբերտ Մաքեյան, 06. 03.2023թ.վճիռ) Վարչական դատարանը նույնպես անվավեր է ճանաչել «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» ոստիկանության

որոշումը, քանի որ հիմքում դրվել են միայն ենթադրյալ ընտանեկան բռնության ենթարկված կնոջ փաստարկները, սակայն այլ ապացույցներ ձեռք չեն բերվել, որոնք կարող էին ձեռքբերվել։

Մեջբերում վճռից՝ «Վերլուծելով վերը նշված իրավական նորմերի պահանջներն և հետազոտելով Պատասխանողի կողմից ներկայացված վարչական վարույթի նյութերը՝ դատարանն արձանագրում է, որ դրանցով չի հիմնավորվում Ռաֆֆի Պետրոսյանի կողմից կնոջը սպանելու սպառնալիք հնչեցնելու փաստը՝ առավել ևս դրա իրական լինելու հանգամանքը, քանզի վարչական վարույթի ընթացքում՝ որպես հիմնավորում, ընդունվել է լսում անցկացնելու վերաբերյալ 08.02.2023 թվականի արձանագրությունն, որում նշված են միայն երրորդ անձ Դիանա Թովմասյանի ներկայացրած փաստարկները (դրանց հետ միաժամանակ դատարան ներկայացված մյուս նյութերը վերաբերում են վիճարկվող վարչական ակտի կայացումից առաջ տեղի ունեցած դեպքերին, այսինքն՝ վիճարկվող վարչական ակտով արձանագրված դեպքին չեն վերաբերել և այդ ակտի կայացման հիմք չեն հանդիսացել, հետևաբար՝ չեն կարող դրվել որոշման կայացման հիմքում), իսկ այլ ապացույցներ (տեսանյութեր, ականատես անձանց ցուցմունքներ և այլն), որոնք կարող էին ձեռք բերված լինել վարչական վարույթի շրջանակներում, դատարան չեն ներկայացվել, մինչդեռ, միայն Երրորդ անձի կողմից ներկայացված հաղորդումը և բացատրությունը չէին կարող բավարար լինել դրանցում նշված սպանելու սպառնալիքի և դրա իրական լինելու փաստը հաստատված համարելու և սույն վարչական գործով վիճարկվող 08.02.2023 թվականի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին» որոշումն ընդունելու համար: Առավել ևս, որ հայցվոր Ռաֆֆի Պետրոսյանը 08.02.2023 թվականին տրված բացատրությամբ հայտնել է, որ սույն թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 20:00-ին, եղել է տանը, Դիանա Թովմասյանից պարզաբանումներ է պահանջել խիստ ընտանեկան հարցերի շուրջ, սակայն սպառնալիք իր կողմից չի եղել»։

- Մեկ այլ գործով (N: ՎԴ/3672/05/23, դատավոր Դանիել Դանիելյան, 12.10.2023թ. վճիռ/ Վարչական դատարանը նույնպես շեշտը դրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջների վրա և նույնպես անվավեր է ճանաչել ոստիկանության որոշումը նախազգուշացում կիրառելու վերաբերյալ։ Սակայն այս օրենքի լույսի ներքո՝ այս գործով պահանջներն ոստիկանությունից այնքան ծավալուն են, որ գրեթե հավասարվում են նախաքննություն իրականացնող, մեղադրանք ներկայացնող քննչական մարմինների առջև դրվող պահանջների հետ։

Մեջբերում վճռից՝ «Վերոգրյալ իրավական վերլուծության լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվոր Էդգար Աթոյանին «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ» ՀՀ օրենքով սահմանված կանոնների խախտում քննարկվող դեպքում կարող էր վերագրվել այն պարագայում, եթե հաստատվեր այն փաստը, որ վերջինս 03.05.2023թ. Մարիամ Խաչատրյանին ենթարկել է ֆիզիկական բռնության և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին։

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դատարանը փաստում է, որ հիշյալ դրույթն ամրագրել է վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման սկզբունքը, ինչը

ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է տվյալ վարույթով ապահովել գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկումը՝ գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով: Գործի բազմակողմանի քննարկումն իրենից ներկայացնում է վարույթի առարկային առնչվող բոլոր հարցերի պարզաբանումը, իսկ յուրաքանչյուր հարց պետք է պարզաբանվի լրիվ ծավալով՝ առանց որևէ հանգամանք բաց թողնելու և տվյալ գործին առնչվող բոլոր հարցերի համակցությամբ, քանի որ յուրաքանչյուր հարցի պարզաբանումն, ըստ էության, հանգեցնում է գործի քննության ամբողջականությանը: Բացի այդ, գործը պետք է քննարկվի առկա բոլոր հարցերի հստակ լուծմանը համապատասխան՝ օրենքի պահանջների հետ համադրմամբ: Ընդ որում, գործի բազմակողմանի քննարկումը վարչական մարմնի պարտականությունն է»:

Այս գործով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ենթադրյալ բռնություն իրականացրած անձը՝ Էդգար Աթոյանը, օգտվելով իր Սահմանադրական իրավունքից, հրաժարվել է որևէ բացատրություն տալուց և պարզաբանումներ ներկայացնելուց:

Հաշվի առնելով այս հանգամանքները, ինչպես նաև բավականին սուղ ժամկետը անհետաձգելի միջամտություն կիրառելու համար՝ արդյո՞ք իրատեսական է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Ի դեպ, ուշադրության է արժանի օրենքում «քննարկում» եզրույթի օգտագործումը, այլ ոչ թե «քննություն»:

Սույն գործով դատարանի կողմից օրենքի նման լայն մեկնաբանումը հանգեցնում է իրավիճակի, երբ անիրատեսական է կարճ ժամանակահատվածում բոլոր հնարավոր տեղեկությունների, փաստերի հավաքելը:

Վարչական դատարանի (առաջին ատյան) կողմից ոստուկանության որոշումների հիմնավորվածության վերաբերյալ ուշագրավ են հետևյալ 2 գործերով վճիռները, որոնք բացառիկ են այն առումով, որ իրավաչափ, հիմնավորված են համարել այդ որոշումները: Սակայն առաջին ատյանի այդ 2 վճիռներից մեկը Վերաքննիչ վարչական դատարանը, այնուամենայնիվ, վերացրել է, ինչպես նաև անվավեր ճանաչել ոստիկանության որոշումը:

- Այսպես, գործ ՎԴ/4644/05/24 վերաբերում է Երևանում բնակվող ԱՄՆ քաղաքացիներին: Ընտանիքի բոլոր անդամները՝ ենթադրյալ բռնություն կիրառած Կազիմիրո Խոսե Կանհա Կավակո Դիասը, նրա կինը՝ Ռուլա Նաբիլ Խուրի Կավակո Դիասը և նրանց երեխաները ԱՄՆ քաղաքացիներ են: Վարչական դատարանը 04.05.2024թ. վճռով հիմնավոր է համարել անհետաձգելի միջամտության մասին ոստիկանության որոշումը:

Մեջբերում վճռից՝ «Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը. «… «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 23.04.2024 թվականի որոշման համաձայն՝ հայտնաբերվել է ընտանիքում բռնության դեպք, մասնավորապես՝ պարզվել է, որ 2024 թվականի ապրիլի 19-ին, 20-ին և 21-ին Կազիմիրո Խոսե Կանհա Կավակո Դիասն իրենց՝ ք.Երևան, Վահագնի թաղամաս, Ռ.Զարդարյան փողոց, թիվ 32 տանը պարբերաբար կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճի ժամանակ, ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել Երրորդ անձին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:
Որոշվել է Կազիմիրո Խոսե Կանհա Կավակո Դիասի նկատմամբ կիրառել անհետաձգելի միջամտություն, այն է՝ Ռուլա Նաբիլ Խուրի Կավակո Դիասից հեռավորություն սահմանել 20 օր ժամկետով՝ 20 մետր հեռավորությամբ:

Այս գործով ոստիկանության որոշման հիմքում դրվել են, ոչ միայն բռնության ենթարկված կնոջ հայտարարությունը և բացատրությունները, այլ նաև բռնություն ենթարկված կնոջ մոտ «կրծքավանդակի աջ հատվածի փափուկ հյուսվածքների սալջարդ»-ի ախտորոշված լինելը, «Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափանիշների վերաբերյալ» հարցաթերթիկը, «Լսում անցկացնելու վերաբերյալ» արձանագրությունը, «Հարցում կատարելու վերաբերյալ» արձանագրությունը:

Այնուամենայնիվ, Վերաքննիչ վարչական դատարանը վերացրել է առաջին ատյանի դատարանի վճիռը և անվավեր ճանաչել ոստիկանության որոշումը: Այսինքն, նույնիսկ այսքան ապացույցները և հիմնավորումները վերջին հաշվով բավարար չեն համարվել անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու համար:

- Հետազոտված 20 գործերից ոստիկանության որոշումը իրավաչափ համարելու վերաբերյալ ընդամենը 2 վճռից միայն մեկն է օրինական ուժ ստացել՝ գործ ՎԴ/3667/05/22, դատավոր Ռուզաննա Ազրոյան, 03.11.2022թ. վճիռը: Դատարանում քննվել է «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ» ոստիկանության որոշման դեմ բերված հայցադիմումը:

Մեջբերում վճռից՝ «Դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտով արձանագրվել է, որ (…) Հարություն Սամվելի Գրիգորյանը իր նախկին կնոջ Սոֆյա Խաչատրյանի և որդու Արեն Գրիգորյանի նկատմամբ իրականացվել է հոգեբանական բռնություն:

Վարչական գործում առկա 10.05.2022թ. արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ Ա. Ենգիբարյանը զրույց է ունեցել քաղաքացի Սոֆյա Խաչատրյանի հետ, ով հայտնել է, որ 10.05.2022թ. իր նախկին ամուսինը՝ Հարություն Սամվելի Գրիգորյանը եկել է «Փոքրիկ Իշխան» կրթահամալիր՝ իրենց որդուն Արեն Հարությունի Գրիգորյանին տեսակցելու, սակայն երեխան հրաժարվել է, որից հետո հայրը փորձել է ստիպողաբար տանել երեխային, որից հետո կողմերի միջև սկսվել է վիճաբանություն (…) ծեծկռտուքի և ֆիզիկական բռնության դեպք տեղի չի ունեցել, այլ երեխան սթրեսի է ենթարկվել և վախենալով կարծել է, որ հայրը կարող է իրեն ստիպողաբար տանելով վնասել: 10.05.2022թ. կազմված արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ Ա. Ենգիբարյանը այցելություն է կատարել Սոֆյա Խաչատրյանի բնակության հասցե, որտեղ զրույց է ունեցել անչափահաս Արեն Գրիոգրյանի հետ, ով հայտնել է, որ 10.05.2022թ. իր հայրը Հարություն Գրիգորյանը եկել է «Փոքրիկ Իշխան» կրթահամալիր՝ իրեն տեսակցելու, սակայն ինքը հրաժարվել է, որից հետո Հ. Գրիգորյանը փորձել է ստիպողաբար երեխային համոզել իր հետ գնա: Անչափահաս Ա. Գրիգորյանը հայտնեց, որ իր հայրը իրեն ծեծի չի ենթարկել, որևէ ֆիզիկական բռնություն չի գործադրել, այլ փորձել է ստիպողաբար համոզելով իր հետ տանել, որից ինքը շատ է վախեցել՝ կարծելով, որ հայրը կարող է իրեն վնասել: 10.05.2022թ. կազմված արձանագրությամբ արձանագրվել է, որ Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի և ոստիկանության Շենգավիթի ԱԳ և ԸԲԿ բաժնի աշխատակիցների մանկավարժ Մ. Սինանյանի ներկայությամբ զրույց են ունեցել Սոֆյա Խաչատրյանի և անչափահաս Արեն Գրիգորյանի հետ, ով հայտնել է, որ հայրը՝ Հարություն Գրիգորյանը նշված օրը եկել է երեխային տեսակցելու և փորձել է ստիպողաբար նստացնել մեքենան, երեխան վախեցել էր, հուզված էր, հստակ չէր կարողանում պատասխանել հարցերին, կաշկանդված էր, ինչն ակնհայտ էր: երեխայի հետ տեղի է ունեցել զրույց, որի

արդյունքում հրաժարվել է պատասխանել հարցերին: 11.05.2022թ. կազմված արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ Ա. Ենգիբարյանը Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնի հանձնաժողովի քարտուղար Ս. Վարդանյանի ներկայությամբ այցելություն է կատարել «Փոքրիկ Իշխան» կրթահամալիր, որտեղ զրույց են ունեցել կրթահամալիրի մանկավարժ Լիլիթ Կոստանյանի հետ, ով հանդիսանում է Արեն Գրիգորյանի դասղեկը, ում ներկայությամբ տեղի է ունեցել նշված դեպքը: Լ. Կոստանյանը նշել է, որ նշված օրը նշված դեպքի ժամանակ ծեծկռտուք տեղի չի ունեցել, այլ հայրը ստիպողաբար փորձել է երեխային տանել, որի արդյունքում երեխան վախեցել է և սթրեսի է ենթարկվել: Այսպիսով, սա ոստիկանության այն բացառիկ որոշումներից է, որտեղ, բացի բռնության ենթարկված կնոջ հայտարարությունից և բացատրություններից, իրականացվել են գործողություններ՝ դեպքի իսկությունը պարզելու նպատակով այլ հիմնավորումներ ձեռքբերելու ուղղությամբ: Որն էլ դատարանը բավարար է համարել և ոչ անմեղության կանխավարկածի պահպանման, ոչ բռնության դեպքի վերաբերյալ քրեական գործի առկայություն կամ օրինական ուժի մեջ մտած դատվճիռ չի պահանջվել: Միգուցե այն պատճառով, որ «հոգեբանական բռնություն» հանցակազմ առկա չէ:

Հարցումներ ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ

Հետազոտության շրջանակներում մշակվել է Հարցաթերթիկ՝ 30 հարցով */Հավելված 3/:* հարցումն անցկացվել է ընտանեկան բռնության ենթարկված «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ 10 շահառուների շրջանում: Հարցերը վերաբերել են ենթադրյալ անուղղակի խտրականության դրսևորումներին: Հարցումներով ստացված տեղեկատվության վերլուծությամբ ստացել ենք հետևյալ պատկերը.

- Հարցված կանայք բռնության են ենթարկվել 7 ամսից մինչև իսկ 18 տարի:
- Դիմել են ոստիկանություն 2017-2023թթ.:
- Գործը/երը դատաիրավական համակարգում քննվում/ել են 2 ամսից- մինչև իսկ 5 տարի:
- Ի՞նչպես կգնահատեք ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը հարցին 10 հարցվածներից բոլորը պատասխանել են՝ նորմալ:
- Ի՞նչպես կգնահատեք քննիչի վերաբերմունքը հարցին

✓ 7 կին պատասխանել է՝ նորմալ,

✓ 2-ը խտրական, մի պահ համոզել են հաշտվել

✓ 1-ը՝ բարեհաճ

- Դատավորի վերաբերմունքի մասին նույն հարցին՝

✓ 2 կին պատասխանել են՝ նորմալ,

✓ 2-ը՝ արդարամիտ,

✓ 2-ը նշել են, որ պարբերաբար հետաձգվել են նիստերը,

✓ 1-ը նշել է, որ դատավորը կարծես չէր հավատում իրեն,

✓ 1-ը նշել է, որ իր տպավորությամբ դատավորը չէր տեսնում ընտանեկան բռնության շարունակման խնդիրը:

✓ 1 գործով դեռ դատական պրոցես առկա չէ:

- Կանխարգելվե՞լ է ընտանեկան բռնությունը, եթե այո, ապա՝ ո՞ր մարմնի գործունեության շնորհիվ հարցին՝ հարցված 10 կանանցից

✓ 3-ը պատասխանել են, որ դեռ շարունակվում է բռնությունը,

✓ 3-ի պարագայում՝ բռնարարից հեռանալն է կանխել,

✓ 2-ի պարագայում՝ պետական մարմինների շնորհիվ,

✓ 1-ը՝ կալանավորում խափանման միջոցի,

✓ 1-ը՝ոստիկանության կողմից կիրառված անհետաձգելի միջամտության:

- Ոստիկանը, քննիչը, դատավորը 8 դեպքով բացատրել են կանանց իրավունքները և պարտականությունները, 2 դեպքով՝ ոչ:

- Քննիչը փաստաբան ունենալու իրավունքի մասին կանանց բացատրել է 9 դեպքով, 1 դեպքով՝ ոչ:

- Ոստիկանի, քննիչի, դատավորի, դատախազի կողմից

✓ հարցված 7 կին չի արժանացել խտրական վերաբերմունքի, վիրավորական արտահայտության, անթույլատրելի վարվեցողության,

✓ 1 կին նշել է քննիչի կողմից նման վերաբերմունքի մասին, որը, ըստ հարցվածի, դրսևորվել է կոպիտ ու արհամարհական վերաբերմունքով.

✓ 1 կին նշել է, որ մասամբ է նման վերաբերմունք զգացել:

✓ 1 կին նշել է, որ ստացել է մեղադրյալի կարգավիճակ, այնուհետև դատարանի կողմից արդարացվել:

- Սեռով պայմանավորված առանձնակի մոտեցում եղե՞լ է՝ դրական թե բացասական և ինչպես է արտահայտվել հարցին

✓ 7 կին բացասական պատասխան է տվել,

✓ 1-ը՝ նշել է՝ թվում էր դատարանը չէր հավատում ինձ,

✓ 1-ը առանձնացրել է, որ բողոքելու համար ինքն է տուժողից դարձել մեղադրյալ,

✓ 1-ը նշել, որ կինը ամուսնու դեմ բողոքում է, արդեն բացասական վերաբերմունք է:

- Սոցիալական/ֆինանսական վիճակով պայմանավորված առանձնակի /դրական, թե բացասական/ վերաբերմունք ոչ մի հարցված կին չի զգացել դատաիրավական համակարգի ներկայացուցիչների /ոստիկան, քննիչ, դատավոր/ կողմից:

- Հարցված կանայք հիմանկանում սոցիալական միջին կամ չապահովված վիճակում են և նրանցից 5-ը ֆինանսական կախվածություն ունեն կամ ունեցել են բռնություն գործադրած անձից:

- Դատաիրավական համակարգի ներկայացուցիչների կողմից ընտանեկան բռնության ենթարկված լինելով՝ իրենց հայտնածի վերաբերյալ անվստահություն զգացել են հարցված երեք կին. «ասում էին՝ շառ ես անում», «չէին հավատում»:

- Բոլոր 10 հարցված կանայք միանշանակ պնդել են, որ իրենց իրավունքները չեն կարողացել ինքնուրույն՝ առանց փաստաբանի պաշտպանել: Բոլոր հարցվածները նշել են, որ շարքային քաղաքացին առանց փաստաբանի չի կարող պաշտպանել իր իրավունքները: Նրանց տրամադրվել է անվճար հիմունքներով փաստաբան ՀԿ-ի կողմից:

- Վստահո՞ւմ եք դատաիրավական համակարգին գրեթե բոլոր մասնակիցները պատասխանել են՝ վերապահումներով այո:

Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով քրեական վարույթներ

Հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք 28 քրեական գործով դատական ակտեր և 4 քրեական գործեր զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ (զինծառայողները մեղադրվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ հանցակազմերով)։ Ստորև ներկայացնում ենք մի շարք կարևոր հանգամանքների, փաստերի վերաբերյալ ստացված արդյունքները։

Ուսումնասիրված գործերի տարեթվեր՝

- 2008թ. ՝ 8 գործ,
- 2009թ. ՝ 3 գործ,
- 2010թ. ՝ 5 գործ,
- 2011թ. ՝ 3 գործ,
- 2012թ. ՝ 3 գործ ,
- 2013թ. ՝ 2գործ,
- 2016թ. ՝ 1 գործ,
- 2017թ. ՝ 3 գործ,
- 2018թ. ՝ 1 գործ,
- 2020թ.՝ 1 գործ
- 2022թ՝ 2 գործ։

Առաջադրված մեղադրանքները և դատապարտումներն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունված 01. 08. 2003թ.) հոդվածներով նախատեսված հանցակազմերի՝

- 104-րդ հոդված (սպանություն)՝ **4 մեղադրյալ՝ 4 գործով**,
- 110-րդ հոդված (ինքնասպանության հասցնել)՝ **8 մեղադրյալ 7 գործով**,
- 137-րդ հոդված (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը)՝ 1 մեղադրյալ,
- 176-րդ հոդված (Կողոպուտը)՝ 4 մեղադրյալ,
- 182-րդ հոդված (Շորթում)՝ 3 մեղադրյալ,
- 228-րդ հոդված (իոնացնող ճառագայթման աղբյուրների շահագործման անվտանգության հետ կապված կանոնները խախտելը)՝ 1 մեղադրյալ,
- 235-րդ հոդված (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը)՝ 2 մեղադրյալ,

- 238-րդ հոդված (զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը)՝ 1մեղադրյալ,
- 314-րդ հոդված (պաշտոնական կեղծիք)՝ 1 մեղադրյալ,
- 358-րդ հոդված (պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) ՝1 մեղադրյալ,
- 358.1 հոդված (ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը)՝ 3 մեղադրյալ,
- 359-րդ հոդված (01. 07. 2022թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 521-րդ հոդված) /Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում/՝ **22 մեղադրյալ**,
- 360-րդ հոդված (զինծառայողին վիրավորանք հասցնելը)՝ 7 մեղադրյալ,
- 361-րդ հոդված (զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը)՝ 2 մեղադրյալ,
- 362-րդ հոդված (դասալքությունը)՝ 1 մեղադրյալ,
- 363-րդ հոդված (անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը)՝ 1 մեղադրյալ,
- 365-րդ հոդված (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը)՝ 1 մեղադրյալ,
- 369-րդ հոդված (ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը)՝1 մեղադրյալ,
- 375-րդ հոդված (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը)՝ 6 մեղադրյալ,

Զինծառայողների կոչումները (մեղադրյալ և տուժող)

Շարքային կազմից՝

- շարքային՝ 80,
- եֆրեյտոր՝ 1,
- կրտսեր սերժանտ՝ 2,
- սերժանտ՝ 4 (ջոկի, դասակի հրամանատարներ, այսինքն՝ պետեր և պաշտոնատար անձինք),
- ավագ սերժանտ՝ 1,
- ավագ՝ 2 (1 գործով մեղադրյալը ստորադասի նկատմամբ կատարված հանցագործության կապակցությամբ՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործը կարճվել է),

Սպայական կազմից՝

- լեյտենանտ՝ 7 (վաշտի, դասակի հրամանատարներ, այսինքն՝ պետեր և պաշտոնատար անձինք) 2 գործով 2 սպանություն՝ 15-ական տարի ազատազրկում,
- կապիտան՝ 2 (վաշտի, դասակի հրամանատարներ՝ նշանակված ազատազրկումները պայմանականորեն չեն կիրառվել),
- փոխգնդապետ՝ 1 (զորամասի հրամանատար, այսինքն՝ պետ և պաշտոնատար անձ)՝ *առաջին ատյանի դատարանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, գործուն զղջալու հիմքով գործը կարճվել է և քրեական հետապնդումը դադարեցվել է:*

Վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և համաներման հիմքով՝ քրեական գործի վարույթը կարճել է և դադարեցրել քրեական հետապնդումը:

Վերադասը ստորադասի նկատմամբ՝ 10 գործով 10 վերադաս է մեղադրվել (104-րդ հոդվածով՝ սպանություն, 110-րդ հոդվածով՝ ինքնասպանության հասցնելը, 375-րդ հոդվածով՝ իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը, 358.1 հոդվածով՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը, 360-րդ հոդվածով՝ զինծառայողին վիրավորանք հասցնելը):

Ստորադասը վերադասի նկատմամբ՝ 1 գործ:

Պաշտպան ունենալը՝

✓ 32 գործով 58 մեղադրյալ ունեցել են պաշտպաններ:

Տուժողներ՝ 42

✓ **Տուժողը ներկայացուցիչ չի ունեցել՝ 34 տուժող** (այդ թվում՝ ինքնասպանության հասցնելու գործով տուժողը ներկայացուցիչ չի ունեցել և 3 մեղադրյալների նկատմամբ, նախ, խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է չհեռանալու մասին ստորագրությամբ կամ զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելով, այնուհետև քրեական հետապնդումը դադարեցվել է՝ **վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով**):

Տուժողի իրավահաջորդ՝

✓ **Չեն ունեցել՝** 2 տուժող իրավահաջորդ չի ունեցել (սպանության և ինքնասպանության հասցնելու մեկական գործերեով տուժողներն իրավահաջորդ չեն ունեցել և քրեական գործերը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով կարճվել են):

✓ **Ունեցել են՝** 6 տուժող:

Ընտրված խափանման միջոցը՝

- **չի կիրառվել՝** 2 գործով,
- **կալանավորում՝** 7 գործով 18 անձի նկատմամբ (սպանություն, դասալքություն, կողոպուտ), 235-րդ հոդվածով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը), 358-րդ հոդվածով (պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը), 375-րդ հոդվածով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) նախատեսված հանցակազմերով,
- **հրամանատարության հսկողության հնաձնելը՝** 7 գործով 12 մեղադրյալի նկատմամբ,
- **ստորագրություն չհեռանալու մասին՝** 12 գործով 20 անձի նկատմամբ:
- 1 գործով 6 մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է և նրանաց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը կամ զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Քրեական գործերի ելքը

- **Պայմանականորեն չի կիրառվել.** ազատազրկումը ՀՀ քր. օր-ի 70 հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել 8 գործով 14 մեղադրյալի նկատմամբ:

- Նշված գործերից 1 գործով 3 մեղադրյալ տուժողին ինքնասպանության են հասցրել (ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մաս) և դատապարտվել են ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով, սակայն բոլոր նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:
- **Վաղեմության ժամկետներն անցնելը**. 4 գործով 9 մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, քրեական գործի վարույթը կարճվել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառմամբ):
- Նշված գործերից 2 գործով 4 մեղադրյալ տուժողներին ինքնասպանության են հասցրել (ՀՀ քր. օր-ի 110 հոդված) և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է:

Ազատազրկում պատժատեսակը կիրառվել է՝

- սպանության 4 գործով (104-րդ հոդված) 4 դատապարտյալի և
- 4 այլ գործերով 6 դատապարտյալի նկատմամբ (235-րդ հոդվածով՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը և 362-րդ հոդվածով՝ դասալքությունը):

Համաներում՝

- 4 գործով 5 մեղադրյալի նկատմամբ նշանակվել է ազատազրկում, սակայն կիրառվել է համաներում և քրեական հետապնդումը դադարեցվել է:

Գործուն զղջալու հիմք. զորամասի հրամանատար, փոխգնդապետի վերաբերյալ (ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մաս) գործը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել՝ գործուն զղջալու հիմքով, իսկ վերաքննիչ քրեական դատարանը համաներում է կիրառել:

Իրադրության փոփոխման հիմք. 1 անձի վերաբերյալ քրեական գործի վարույթը ՀՀ քր. օր-ի 359 հոդվածով կարճվել է և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ՀՀ քր. օր-ի 74 հոդվածի հիմքով (իրադրության փոփոխման հիմք):

Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով՝ 1 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 521 հոդվածով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է: Եվս 1 անձի նկատմամբ դադարեցվել է՝ մահանալու հիմքով:

Կարգապահական գումարտակում պահելը՝ 2 գործով 6 անձի նկատմամբ:

Կալանքը՝ 6 գործով 10 անձի նկատմամբ:

Գործերի ելքերի ամփոփում

- **Ինքնասպանության հասցնելու վերաբերյալ ընդհանուր 4 գործերից (8 մեղադրյալ)՝ 3 գործով (7 մեղադրյալ) վաղեմության հիմքով գործերը կարճվել են կամ պատժները պայմանականորեն չեն կիրառվել:**
- **10 գործերով ստորադասների նկատմամբ հանցանք կատարած 10 մեղադրյալ եղել են վերադասներ, որոնց նկատմամբ՝**
- 2 գործով 2 վերադաս 104-րդ հոդվածով դատապարտվել են ազատազրկման,
- 1 գործով 1 վերադաս 110-րդ հոդվածով դատապարտվել է ազատազրկման, սակայն պայմանականորեն չի կիրառվել,

- 4 գործով 4 վերադասի նկատմամբ 360-րդ հոդվածով (վիրավորանք հասցնելը) ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել,
- 3 գործով 3 վերադասների նկատմամբ նշանակվել է ազատազրկում (358.1 հոդվածով՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը), սակայն կիրառվել է համաներում և քրեական հետապնդումը դադարեցվել է:
- 375-րդ հոդվածը (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) կիրառվել է վերը նշված գործերից 5-ում:
- 1 գործով զորամասի հրամանատար, փոխգնդապետի վերաբերյալ (ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մաս) գործը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել՝ գործուն զղջալու հիմքով, իսկ վերաքննիչ քրեական դատարանը համաներում է կիրառել (այս գործը կապված չի եղել վերադաս-ստորադաս իրավահարաբերությունների հետ):

Քաղաքացիական հայցեր՝

- Վարույթները կարճվել կամ տուժողների իրավահաջորդների հայցերը մերժվել են՝ 3 սպանության գործերով:
- Հայց չի ներկայացվել 10 գործով:
- Պետական մեղադրողի հայցի բավարարում՝ 3 դեպք, իսկ մերժում՝ 1, քանի որ դատախազը հրաժարվել է հայցից սպանության գործով:

Որոշ հանցագործությունների նկարագրություն ըստ մեղադրանքների, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս բանակում կատարվող հանցագործությունների, մթնոլորտի մասին հետազոտված գործերի շրջանակներում:

Զինծառայողների գրպաններից գաղտնի հափշտակություններ կատարելու համար (գրպաններից գաղտնի հափշտակվել է համապատասխանաբար 23.000 և 2.000 ՀՀ դրամ), ծեծի են ենթարկել Է. Գ. -ին և պարբերաբար նվաստացնելով ու անձնական արժանապատվությունը ստորացնելով, նրան անզգուշությամբ հասցրել ինքնասպանության փորձի, որի հեևանքով Է.Գ. -ն ինքնակամ թողնեով զորամասը, կիսաքանդ շենքում փորձել է կախվել:

Զինծառայողը համածառայողների ներկայությամբ հայհոյանք է տվել Ն. Փ. -ին, ստիպել նրան ներողություն խնդրել Գ. Մ. -ից և ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում 2 համածառայողների հետ միասին խմբով, բռնություն է գործադրել Ն. Փ. -ի նկատմամբ: Դրանից հետո նույն շարժառիթներով խմբով, համոզելու եղանակով դրդել է Գ. Մ. -ին հանցանք կատարելուն, որից դրդված Գ. Մ. -ն բռնություն է գործադրել Ն. Փ. -ի նկատմամբ: Գումար շորթելու վերաբերյալ, վերջիններիս հետ միասին՝ խմբով, Ն. Փ. -ից 5000 ՀՀ դրամ պահանջելուց և ստանալուց հետո, որպես միակ ընդունելի տարբերակ, Ն. Փ. -ից նույնպես պահանջել ու ստացել է վերջինիս պատկանող 10000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսն ու 1500 ՀՀ դրամ արժողությամբ ձեռքի ժամացույցը, ինչի հետևանքով Ն. Փ. -ին պատճառվել է զգալի չափերի գույքային վնաս: Հայտնվելով անելանելի ու աճող անբավարարվածության վիճակում, որը սահմանափակել է նրա ընտրության հնարավորությունները, խախտել ինքնապաշտպանության մեխանիզմները, որոնք հանդիսացել են հոգեկան դեզադապտացիայի, ֆրուստացիայի վիճակի պատճառ, վերջինս Ն զորամասի անցագրային կետի մոտ, շարքային Հ. Շ. -ի փոխարեն հերթապահելու ժամանակ վերջինիս ամրակցված ինքնաձիգով իր գլխի շրջանում կրակոց արձակելու եղանակով ինքնասպան է եղել:

Գտնվելով մարտական հերթապահության մեջ, գետնատնակում, զինծառայողներ] ներկայությանբ մեղադրել է Ա.Ա. -ին գաղտնի կետչուպ ուտելու մեջ, հայհոյանքներ է հասցրե նրան և զինվորական գոտիով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին Զինծառայող , կոչումով կրտսեր սերժանտ, լսելով Ա.Ա. -ի երդումը քրոջ արևով,ոյ համածառայողներից թաքուն կետչուպ չի կերել, հայհոյանք է տվել Ա. Ա. -ին և ոտքով հարվածե նրա կրծքավանդակին, ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը: Ա.Ա. -ի մարտական հերթապահություն կրելով դիրքի առաջնային գծում, իրեն ամրակցված ԱԿ-7 տեսակի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել աջ գոտկատեղի շրջանում, ինքն իրեն պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Հ. Գ. -ն մեղադրվում է այն բանում, որ նա հանդիսանալով զորամասի պահեստային հրամանատարական կետի կապի վաշտի դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ նշանակված լինելով զորամասի հերթապահ, հանդիսանալով պետ, պաշտոնատար անձ հերթապահության սենյակում տեսնելով նույն զորամասի ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գ. Ս. -ին, որը փորձել է կատակել Հ.Գ. -ի հետ, դիտողություն է արել նրան առանց թույլտվության հերթապահության սենյակ մտնելու համար և չնայած Գ.Ս. -ի կողմից դիտողությունն ընդունելու և սենյակից դուրս գալու փորձին, նրա կատակը որպես վիրավորանք ընկալելով անցել է պաշտոնեական լիազորությունների սահմանը և իր գերակայությունը ցուցադրելու անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, հայհոյանքներ է տվել նրա հասցեին, բռնություն գործադրելով հրել է դեպի սենյակի պատը, ինչով էական վնաս պատճառել զինվորական պետերի և պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական գործառույթների իրականացման սահմանված կարգին և սեփական անձի առավելություններին ընդգծելու մոլուցքով տարված, չնչին առիթով խուլիգանական դրդումներով սպանելու դիտավորությամբ պատյանից հանել է հերթապահությունը կրելու համար իրեն ամրակցված ատրճանակը, լիցքավորել այն և կրակոց արձակել Գ.Ս. -ի ստորին ծնոտի ձախ կեսի անկյան շրջանին՝ ապօրինաբար զրկելով նրան կյանքից:

Նշանակված լինելով զորամասի հսկիչ տեխնիկական կետի հերթապահ, ծառայողական անհրաժեշտությամբ կարճ ժամանակահատվածով բացակայությունից հետո՝ վերադարձել է հերթապահության սենյակ և տեսել, որ օրվա վերակարգում չընդգրկված, իր նկատմամբ, ստորադրյալ հանդիսացող, նույն զորամասի 1-ին մոտոհրաձգային գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Լ. Ղ. -ն պառկած է անկողնում, պահանջել է հեռանալ և պահանջը չկատարվելուց հետո, անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ իր հեղինակությունը վերահաստատելու նպատակով անցել է պաշտոնեական լիազորությունների սահմանը՝ քաշքշել և բազմաթիվ հարվածներ է հասցրել նրան՝ պատճառելով էական վնաս, այն է՝ ծեծի է ենթարկել Լ.Ղ. -ին և պատճառել նրա առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ:

Է. Մ. -ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի հրամանատար, կոչումով կապիտան այսինքն պետ, խստապահանջ պետի տպավորություն թողնելու, անձնակազմի շրջանում իր գերկայունությունն ամրապնդելու, սեփական անձի գերկայունությունը ընդգծելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, անցել է իր պաշտոնեական լիազորությունների սահմանը, մասնավորապես՝ հիշյալ ստորաբաժանման 2-րդ հարկի միջանցքում առանց թույլտվության շարքից դուրս գալու և գումարտակ գնալու համար բռնություն է գործադրել իր նկատմամբ

ստորադրյալ հանդիսացող, ջոկի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գ. Գ. -ի նկատմամբ՝ պատճառել էական վնաս, այն է՝ փայտյա ազդանշանային դրոշակով հարվածել է վերջինիս գլխին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

Արձանագրված խնդիրներ եվ եզրակացություններ

Որակական հետազոտության ուսումնասիրության արդյունքում արձանագրել ենք հետևյալ խնդիրները, որոնք կարող են հանգեցնել որոշակի խմբի նկատմամբ, տվյալ դեպքում կանանց և զինծառայողների նկատմամբ ենթադրյալ անուղղակի խտրականության.

Կանանց իրավունքներ

- Հետազոտված գործերի մեծամասնությամբ ընտանեկան բռնության ենթարկվում են կանայք:
- Իրավակիրառ պրակտիկան այնպիսին է, որ ընտանեկան բռնության սահմանման մեջ ուժի և վերահսկողության վրա հիմնված (դոմինացիայի) հարաբերությունների հիշատակման բացակայությունը հանգեցնում է անուղղակի խտրականության կանանց նկատմամբ: Ուժի և վերահսկողության բաղադրիչը կարևոր գործոն է ընտանեկան բռնության գործերով:
- Հետևաբար, ներկայիս կարգավորումներով, երբ կինը պաշտպանվելով տղամարդու (օրինակ՝ ամուսնու, նախկին ամուսնու, զուգընկերոջ) բռնի գործողություններից, օրինակ՝ ճանկռում է, հրում, հարված հասցնում՝ բռնարարից ձերբազատվելու նպատակով, ապա կինը նույնպես «փոխադարձ» դիտարկվում է որպես բռնարար: Հետևաբար, օրենսդրության մեջ ընտանեկան բռնության գործերով ուժի և վերահսկողության կոմպոնենտի բացակայությունը իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկայում հանգեցնում է բռնության ենթարկված կանանց իրավունքների փաստացի խտրական սահմանափակման:
- Այսինքն՝ ընտանեկան բռնության ենթարկվող կանայք շարունակում են տղամարդու կողմից ուժի և վերահսկողության տակ գտնվելով վախենալ իրենց իրավունքների իրացումից:
- Այլ կերպ ասած՝ երբ իրավակիրառն այս գործերով շեշտը չի դնում ուժի և վերահսկողության գործոնի վրա, բռնության ենթարկվող կանայք ինքնապաշտպանության դիմելուց կաշկանդված են իրենց նկատմամբ փոխադարձ վարույթ հարուցելով և մեղադրվելու վախով:
- Բռնության ենթարկվող կանայք կարող են խուսափել նաև կանանց բնորոշ՝ ճանկռելով կամ կծելով ինքնապաշտպանվելուց: Նման իրավիճակում ակնհայտ է դառնում ինքնապաշտպանվելու խտրական սահմանափակումը:
- Ընտանեկան բռնության գործերով հետազոտված երեք դեպքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կանայք տուժող լինելով՝ սահուն կերպով վերածվել են նաև մեղադրյալի: Նման կերպ վախի մթնոլորտ է ձևավորվում, որպեսզի կանայք իրենց հանդեպ կատարված բռնության մասին զերծ մնան ոստիկանություն բողոք ներկայացնելուց, ինչը հակահիրավական ու անթույլատրելի է:
- Նման իրավիճակներում փաստացի խտրականորեն անհավասար իրավիճակում են հայտնվում բռնության ենթարկվող կանայք, քանի որ, որպես կանոն, նրանք բնակվում են ամուսնու տանը, հաճախ վերջինիս հարազատների՝ հիմնականում ծնողների հետ, որոնք սկսում են վկայություններ տալ կնոջ դեմ:
- Ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության որոշումների 85% անվավեր են ճանաչվում Վարչական դատարանի կողմից: Այս իրողությունն

ակնհայտորեն խտրական կերպով խիստ սահմանափակում է բռնության ենթարկված կանանց իրավունքների իրացումը: Ոստիկանության կողմից նշված որոշումների ոչ բավարար հիմնավորումները մի կողմից և դատարանների ոչ համաչափ պահանջները հանգեցնում են բռնության ենթարկված կանանց պաշտպանության համապատասխան միջոցների խտրական չկիրառմանը պետության կողմից:

- Վարչական դատարանում Ոստիկանության կողմից կիրառված անհետաձգելի միջամտության որոշումը անվավեր ճանաչվելուց հետո Ոստիկանությունը հիմնականում՝ հետազոտված գործերի 90 տոկոս դեպքերում վերաքննիչ բողոքներ չի բերում Վերաքննիչ վարչական դատարան: Այս քաղաքականությունը կարող է ենթադրյալ անուղղակի խտրականության տարրեր պարունակել ԸԲ ենթարկված կանանց խմբի նկատմամբ: Այսինքն՝ Ոստիկանությունը չի պայքարում, որ իր իսկ կողմից կայացված ակտերը մնան օրինական ուժի մեջ՝ դրանով իսկ պաշտպանելով ԸԲ ենթարկված կանանց ու կանխարգելելով նրանց նկատմամբ հավանական բռնության կրկնման վտանգը:
- Ուսումնասիրված գործերի շրջանակներում Պատասխանող կողմը (ՀՀ ոստիկանություն) 15 դեպքում դատարան չի ներկայացրել հայցադիմումի պատասխան կամ որևէ առարկություն (չի հայտնել որևէ իրավական դիրքորոշում) և հրավիրված դատական նիստերին չի ներկայացել (դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված պատասխանող կողմը չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին): Այս իրողությունը, մեր կարծիքով, բռնության եթարկված կանանց նկատմամբ նույնպես ենթադրյալ անուղղակի խտրական մոտեցումների պատճառահետևանքային կապի մեջ է:
- Ոստիկանությունը անհետաձգելի միջամտության որոշումն անհապաղ կիրառելու օրենքով սահմանված պարտականություն ունի: Սակայն այս պարտականության կատարումն անիրատեսական է դառնում, երբ Վարչական դատարանի վճիռներով արտահայտված դիրքորոշումների համաձայն ոստիկանությունը պարտավոր է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնել՝ հիմնվելով անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա: Նման պահանջն իրագործելն անիրատեսական է սեղմ ժամկետների պատճառով: Ավելին՝ այդ պահանջները վերաբերում են նախաքննությանը և դատաքննությանը: Ստեղծված իրավիճակն այլ երևույթների հետ մեկ տեղ, ինչպես նաև ինքնին, ըստ էության հանգեցնում է բռնության ենթարկված կանանց իրավունքների խտրական սահմանափակման:
- Ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության որոշումն անհապաղ կիրառելու օրենքով սահմանված պարտականության կարատումը դառնում է անիրագործելի, երբ մի շարք վճիռների համաձայն՝ հարկավոր է համարվում օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը բռնության դեպքի վերաբերյալ կամ ծնողական այս կամ այն իրավունքի սահմանափակման համար դատական ակտի առկայությունը:
- Ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ որոշումները ՀՀ ոստիկանությունը որպես կանոն հիմնավորում է միայն ենթադրյալ բռնության ենթարկված անձի հայտարարությամբ և բացատրություններով, ինչը դատարանը բավարար հիմնավորում չի համարում: Ոստիկանությունը թեկուզև կարճ ժամանակահատվածում պարտավոր է ձեռնարկել և իրականացնել բոլոր հնարավոր միջոցները՝ որոշումը նաև այլ փաստերով, հանգամանքներով հիմնավորելու համար: Հետևաբար, ոստիկանության կողմից որոշումները ոչ բավարար հիմնավորելը, երբ դա հնարավոր է, փաստացի խտրականորեն սահմանափակում է բռնության ենթարկված կանանց պաշտպանված լինելու իրավունքը:

- Ոստիկանության կողմից անհետաձգելի միջամտության որոշում կայցնելիս՝ բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության մասին ենթադրությունները որպես կանոն չեն հիմնավորվում կամ ոչ բավարար են հիմնավորվում: Ոստիկանությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները թեկուզև սեղմ ժամկետում այդ ենթադրությունները հիմնավորելու համար: Նույնը վերաբերում է նաև կոնկրետ հեռավորություն և ժամկետ սահմանելու հիմնավորվածություններին:
- Որպես խափանման միջոց բացակայելու արգելքը (ստորագրություն չհեռանալու մասին) կիրառվում է 84% դեպքերում, որը լիարժեք չի ապահովում բռնության ենթարկված կանանց անվտանգությունը: Փոխարենը տնային կալանք կամ վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցները կիրառվում են հազվադեպ:
- Ուսումնասիրված գործերի շրջանակում ֆիզիկական ներգործության հանցակազմով նշանակված կարճաժամկետ ազատազրկումները բոլոր դեպքերում պայմանականորեն չեն կիրառվել: Այս իրողությունը ենթադրյալ անուղղակի խտրական մոտեցման դրսևորում է և չի կարող բավականաչափ կանխարգելիչ ազդեցություն ունենալ հետագա հավանական բռնությունների տեսանկյունից:
- Ուսումնասիրված գործերի շրջանակում ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու համար որևէ անձ չի դատապարտվել: Գործերը կարճվում են վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:
- Հետազոտված գործերի շրջանակում ծեծի հանցակազմով 4 գործերից մեկով՝ գործը կարճվել է՝ հաշտության հիմքով, երկուսով՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմոքվ, մեկով՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի չվերացված որոշման առկայությամբ: Հետևաբար, ծեծի ենթարկված կանայք փաստացի մնում էին անպաշտպան, որը չէր կանխարգելում հետագա բռնությունները: Սակայն այժմ հաշտությունը ԸԲ դեպքերով բացառնել է օրենսդրական մակարդակում, վաղեմության ժամկետները ոչ մեծ ծանրության գործերով սահմանվել են 5 տարի, որպիսի հանգամանքներում ոչ արդարացնող այս երկու հիմքերը ներկայումս խոչընդոտ չեն:

Զինծառայողների իրավունքներ

- Ուսումնասիրված 28 ակտերի և 5 քրեական գործերի շրջանակներումում (2008թ. - 2022թ.) 58 մեղադրյալներից՝ 10-ը լինելով պաշտոնատար անձինք, պետեր, մեղադրվել են ստորադաս զինծառայողների նկատմամբ կատարված հանցանքների մեջ: 10 վերադասներից՝ 5-ի նկատմամբ պատիժները պայմանականորեն չեն կիրառվել և 3-ի նկատմամբ քրեական հետապնդումները դադարեցվել են՝ համաներում կիրառելով: Միայն երկուսն են դատապարտվել ազատազրկման սպանության մեղադրանքով/:

- Ստորադասների նկատմամբ հանցագործությունների մեջ մեղադրված վերադասների 80%-ը պատժի չի ենթարկվել: Այս իրողությունը՝ քաղաքականությունը կարող է պարունակել ենթադրյալ անուղղակի խտրականության տարրեր ստորադաս զինծառայողների խմբի նկատմամբ:
- Հանցագործությունների մեջ մեղադրված շարքային զինծառայողները (մեղադրյալի և տուժողի միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում) մեծամասնությամբ կրում են նշանակված պատիժները՝ բացառությամբ ինքնասպանության հասցնելու դեպքերի:

- Ինքնասպանության հասցնելու վերաբերյալ ընդհանուր 4 գործերից (8 մեղադրյալ) ՝ 3 գործով (7 մեղադրյալ) վաղեմության հիմքով գործերը կարճվել են կամ պատժները պայմանականորեն չեն կիրառվել:
- Ինքնասպանության հասցնելու գործերով 75% դեպքերում մեղադրյալները պատժի չեն ենթարկվում: Այս իրողությունը՝ քաղաքականությունը կարող է պարունակել ենթադրյալ անուղղակի խտրականության տարբեր ստորադաս զինծառայողների խմբի նկատմամբ:
- Ուսումնասիրված 28 գործերի շրջանակում 42 տուժողից՝ 34-ը ներկայացուցիչ չի ունեցել (այդ թվում՝ ինքնասպանության հասցնելու գործով տուժողը ներկայացուցիչ չի ունեցել և 3 մեղադրյալների նկատմամբ, նախ, խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է չհեռանալու մասին ստորագրությամբ կամ զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելով, իսկ հետո քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով):
- Զինվորական գործերով 81% տուժողները ներկայացուցիչ չեն ունեցել: Սա նույնպես գնահատում ենք որպես խտրականության դրսևորում տուժողների նկատմամբ:
- 2 տուժող իրավահաջորդ չի ունեցել (սպանության և ինքնասպանության հասցնելու մեկական գործերեով տուժողներն իրավահաջորդ չեն ունեցել և քրեական գործերը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով կարճվել են): Այսինքն, գտնում ենք, որ առկա է պատճառ-հետևանքային կապ՝ մահացած տուժողները չունեն իրավահաջորդ և մեղավորները խուսափում են պատասխանատվությունից՝ պատժից, քանի որ պատկան մարմինների անհարկի ձգձգումների հետևանքով լրանում են վաղեմության ժամկետները և գործերը կարճվում են:
- Հետևաբար, արձանագրում ենք խտրական վերաբերմունքն իրավահաջորդ չունեցող մահացած տուժող զինծառայողների նկատմամբ:
- Զինծառայողների սպանության ուսումնասիրված գործերով քաղաքացիական հայցերի վերաբերյալ վարույթները կարճվել են կամ տուժողների իրավահաջորդների հայցերը մերժվել են: Սա նույնպես խտրական մոտեցման ցուցիչ է:
- 22 զինծառայող (ստորադասության հարաբերությունների բացակայությամբ) մեղադվել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար, 14 զինծառայող մեղադրվել է կողոպուտի, շորթման, զինծառայողին վիրավորանք հասցնելու համար: Այս, ինչպես նաև ինքնասպանության հասցնելու, ծեծի հանցակազմերով դեպքերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում ենք՝ զորամասերում տիրող վատ բարոյահոգեբանական մթնոլորտը, կարգապահության նկատմամբ մեղմ ասած թերի վերահսկողությունը: Նման իրավիճակը զորամասերում գնահատում ենք, որպես պետության կողմից յուրօրինակ խտրական մոտեցում շարքային զինծառայողների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ զորամասերում լիարժեք չեն պաշտպանվում շարքային զինծառայողների իրավունքները, մասնավորապես՝ պատվի և արժանապատվության հարգման, հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանման ու կյանքի իրավունքները:

Առաջարկություններ

Որակական հետազոտության արդյունքում արձանագրված խնդիրներից բխող առաջարկություններն են՝

Կանանց իրավունքներ

- Իրավակիրառ պրակտիկայում հասնել այնպիսի փոփոխության /ոստիկանության, քննիչների, դատավորների, դատախազների վերապատրաստումների միջոցով կամ

ենթաօրենսդրական ակտերի մշակմամբ/, որ ընտանեկան բռնության պարագայում պարտադիր հաշվի առնվեն ուժի և վերահսկողության վրա հիմնված (դոմինացիայի) հարաբերությունները ցանկացած ակտ կայացնելիս:

- Ոստիկանության և վարչական դատարանների դատավորների վերապատրաստման դասընթացների անցկացման, իրավակիրառ պրակտիկայի մոնիթորինգի միջոցով վեր հանել ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության որոշումների գրեթե համատարած անվավեր ճանաչման պատճառները, ուսումնասիրվեն դրանք ու մշակվեն համապատասխան քայլեր:
- Նույնպիսի վերապատրաստումների, մոնիթորինգների, հետազոտությունների միջոցով վեր հանել Վարչական դատարանում Ոստիկանության կողմից կիրառված անհետաձգելի միջամտության որոշումը անվավեր ճանաչվելուց հետո Ոստիկանության դերը վերաքննիչ բողոքներ չբերելու հետևանքների առումով:
- Նույնպիսի խնդիրը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ Պատասխանող կողմը (ՀՀ ոստիկանություն) 15 դեպքում դատարան չի ներկայացրել հայցադիմումի պատասխան կամ որևէ առարկություն (չի հայտնել որևէ իրավական դիրքորոշում) և հրավիրված դատական նիստերին չի ներկայացել (դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված պատասխանող կողմը չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին): Վեր հանել հիշյալ խնդրի պատճառահետևանքային կապը և կանանց իրավունքների իրացման խոչընդոտող հիշյալ հանգամանքները:
- Վարչական դատարանի վճիռներով արտահայտված դիրքորոշումների համաձայն ոստիկանությունը պարտավոր է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնել՝ հիմնվելով անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա: Նման պահանջն իրագործելն անիրատեսական է սեղմ ժամկետների պատճառով: Ավելին՝ այդ պահանջները վերաբերում են նախաքննությանը և դատաքննությանը: Հետևաբար, անհրաժեշտ է Վարչական դատարանների դատավորների հետ ԸԲ թեմայով վերապատրաստումներ իրականացնել, դատական մոնիտորինգ, վեր հանել այս և այլ խնդիրներ: Անհրաժեշտության դեպքում կատարել ԸԲ գործերի քննության փոփոխություններ:
- Մշակել հատուկ կարգ, թե ինչպես պետք է ՀՀ ոստիկանությունը հիմնավորի ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտություն կամ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ որոշումները, այսինքն՝ ոչ միայն ենթադրյալ բռնության ենթարկված անձի հայտարարությամբ և բացատրություններով, ինչը դատարանը բավարար հիմնավորում չի համարում: Այլև հավելյալ այլ փաստական տվյալներով, քանզի Ոստիկանությունը թեկուզև կարճ ժամանակահատվածում պարտավոր է ձեռնարկել և իրականացնել բոլոր հնարավոր միջոցները՝ որոշումը նաև այլ փաստերով, հանգամանքներով հիմնավորելու համար: Հետևաբար, ոստիկանության կողմից որոշումները ոչ բավարար հիմնավորելը, երբ դա հնարավոր է, փաստացի խտրականորեն սահմանափակում է բռնության ենթարկված կանանց պաշտպանված լինելու իրավունքը:
- Իրավակիրառ մարմինները պետք է առավել խորամուխ լինեն ԸԲ շարունակականության հարցերում ևս, երբ գնահատում են փոխադարձ մեղադրանքները, որոնք հետևանքն են ուժի և վերահսկողության բաղկացուցիչի բացառման:
- Դատական datalex.am տեղեկատվական համակարգի «Խելացի որոնման» բաժնում թեև 2008թ.-ից սկսած առկա է ծեծի հանցակազմով քրեական վարույթների քանակական ցուցանիշը, սակայն առանձնացված չէ, թե դրանցից քանիսն են ընտանեկան բռնության

դեպքերով (այս խնդիրը վերաբերում է նաև քրեական օրենսգրքի մյուս հոդվածներին, որոնցով առավել հաճախ են հարուցվում ԸԲ դեպքերով քրեական վարույթները)։ Առաջարկում ենք փոփոխել։

- Վերաքննիչ վարչական և Վճռաբեկ դատարանում վարչական գործերի վիճակագրություն չի վարվում, ըստ հայցերի։ Այսինքն՝ վերադաս դատական ատյանների վիճակագրությունն առհասարակ ընդհանրական է։ Առաջարկում ենք փոփոխել։
- Court.am հարթակում «Քրեահիրավական ոլորտի» դատական պրակտիկայի ցուցիչներում առկա է ընդհանուր դատական վիճակագրություն՝ առանձին անչափահասների գործերով, դատապարտյալների, մինչդատական վարույթի վերաբերյալ, սակայն տարանջատված չէ «մերձավոր ազգական» ցուցիչը՝ ԸԲ դեպքերով վարույթները հնարավորինս առանձնացնելու համար։ Առաջարկում ենք փոփոխել։

Զինծառայողների իրավունքներ

- Ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների գործերով իրականացնել հետազոտություններ, քրեական վարույթների մոնիտորինգներ՝ վեր հանելու համար արդյունավետ քննության հետ կապված օրենսդրական ու իրավակիրառ խնդիրները։
- Մշակել դասընթացներ Արդարադատության ակադեմիայի, իրավագիտության ֆակուլտետների ուսանողների համար դատական սխալների թեմայով։
- Հնարավորինս սեղմ ժամկետներում քայլեր ձեռնարկել խթանելու «Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքի նախագծի ընդունմանն ուղված, որտեղ քննության նույթ պիտի դառնան նաև ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների տարիների վաղեմության գործեր նույնպես։
- Օրենքի առաջ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի գործունակության նպատակով ստեղծել հատուկ բաժին, օրինակ, ՀՀ գլխավոր դատախազությունում, որը կուսումնասիրի ընտրովի արդարադատությանն առնչվող բողոքները։ /Ուսումնասիրված 28 ակտերի և 5 քրեական գործերի շրջանակներումում (2008թ. - 2022թ.) 58 մեղադրյալներից՝ 10-ը լինելով պաշտոնատար անձինք, պետեր, մեղադրվել են ստորադաս զինծառայողների նկատմամբ կատարված հանցանքների մեջ։ 10 վերադասներից՝ 5-ի նկատմամբ պատիժները պայմանականորեն չեն կիրառվել և 3-ի նկատմամբ քրեական հետապնդումները դադարեցվել են՝ համաներում կիրառելով։ Միայն երկուսն են դատապարտվել ազատազրկման սպանության մեղադրանքով/։
- Նույն սկզբունքով անհրաժեշտ է, օրինակ, ԲԴԽ-ում հատուկ մոնիտորինգների եղանակով ուսումնասիրել ընտրովի արդարադատության հնարավոր տարբեր պարունակող գործեր /Ստորադասների նկատմամբ հանցագործությունների մեջ մեղադրված վերադասների 80%-ը պատժի չի ենթարկվել։ Այս իրողությունը՝ քաղաքականությունը կարող է պարունակել ենթադրյալ անուղղակի խտրականության տարբեր ստորադաս զինծառայողների խմբի նկատմամբ/։
- Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով պատրաստել և հեռարձակել գենդերային կարծրատիպերին առնչվող հաղորդաշարերի պատրաստում և հեռարձակում։
- Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից հատուկ ուշադրություն հատկացնել հեռարձակվող հեռուստասերիալների խոսույթին, քրեական ենթամշակույթը ռոմանտիզացնող նյութերին, սերիալներին և գենդերային կարծրատիպերին։
- Հետևել դպրոցական դասագրքերում խտրականություն, կարծրատիպեր գեներացնող տեղեկատվությունը։

- Կրթական հաստատություններում մշակել և անցկացնել ուսուցիչների դասընթացներ՝ գենդերային խտրականության, քրեական ենթամշակույթի բացառման թեմաներով:
- Կրթական հաստատություններում մշակել և անցկացնել աշակերտների իրավունք-պարտականությունների մասին դասընթացներ:

Հավելվածներ

Հավելված 1

Ընտանեկան բռնության գործերով հանցակազմերը

9 գործ՝ Ֆիզիկական ներգործություն

ՀՀ քր. օրենսգրքի 195 հոդված

4 գործ՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը /243 հոդված/

3 գործ՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը /508 հոդված/

4 գործ՝ ծեծ

2003թ. ՀՀ քր. օր-ի 118 հոդված

1 գործ՝ ապանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ զույք ոչնչացնելու սպառնալիք /2003թ. ՀՀ քր. օր-ի 137 հոդված/

2 գործ՝ սուտ մատնություն

/ՀՀ քր. օր-ի 476 հոդված/

1 գործ՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը

/ՀՀ քր. օր-ի 171 հոդված/

1 գործ՝ մարդուն առևանգելը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ / 2003թ. ՀՀ քր. օր-ի 131 հոդված/

Հա


Կիրառված խափանման միջոցներն ընտանեկան բռնության գործերով
4%
4%
8%
84%

Բացակայելու արգելք՝ 21 դեպք
Խափանման միջոց չի կիրառվել՝ 2 դեպք
Վարչական հսկողություն՝ 1 դեպք
Տնային կալանք՝ 1 դեպք

Հավելված 2

Անանուն հարցում ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ

Ծրագիր՝ «Ենթադրյալ անուղղակի խտրականությունը խոցելի խմբերի համար»

1. Որքա՞ն ժամանակ եք ենթարկվել ընտանեկան բռնության:
2. Ե՞րբ եք դիմել ոստիկանություն:
3. Քանի՞ տարի է գործը քննվում/ել դատաիրավական համակարգում:
4. Ի՞նչպես կգնահատեք ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը:

✓ բարեհաճ,
✓ նորմալ,
✓ վատ,
✓ խտրական,
✓ համոզել են հաշտվել

5. Ի՞նչպես կգնահատեք քննիչի վերաբերմունքը:

✓ բարեհաճ,
✓ նորմալ,
✓ վատ,
✓ խտրական,
✓ համոզել են հաշտվել

6. Դատավորի վերաբերմունքը

✓ խտրական,
✓ նորմալ,
✓ զոհակենտրոն,
✓ արդարամիտ
✓ այլ

7. Կանխարգելվե՞լ է ընտանեկան բռնությունը, եթե այո, ապա՝ ո՞ր մարմնի գործունեության շնորհիվ:

8. Ոստիկանը, քննիչը, դատավորը, ԴԱՀԿ ծառայողը բացատրել են Ձեր իրավունքները և պարտականությունները:

9. Քննիչը տեղեկացրե՞լ է Ձեզ փաստաբան ունենալու իրավունքի մասին, թե որպես տուժող անհրաժեշտություն չի տեսել:

10. Ոստիկանի, քննիչի, դատավորի, դատախազի, ԴԱՀԿ աշխատակցի կողմից արժանացել եք խտրական վերաբերմունքի, վիրավորական արտահայտության, անթույլատրելի վարվեցողության (այո/ոչ):

11. Եթե այո, ապա նշել վատ վերաբերմունքի դրսևորումները:

12. Ձեր սեռով պայմանավորված առանձնակի մոտեցում եղե՞լ է՝ դրական թե բացասական և ինչպես է արտահայտվել:

13. Ձեր սոցիալական/ֆինանսական վիճակով պայմանավորված առանձնակի վերաբերմունք զգացել եք դատաիրավական համակարգի ներկայացուցիչների /ոստիկան, քննիչ, դատավոր, ԴԱՀԿ/ կողմից՝ դրական, թե բացասական և ինչպես է այն դրսևորվել:

14. Սոցիալական ինչպիսի՞ վիճակում եք, ապահովված/չապահովված/միջին:

15. Բռնություն գործադրած անձից տնտեսական կախվածություն ունե՞ք, թե՞ ոչ (այո/ոչ):

16. Դատաիրավական համակարգի ներկայացուցիչների կողմից Ձեր հայտնածի վերաբերյալ անվստահություն զգացել եք (այո/ոչ):

17. Եթե՝ այո, ապա ինչպես է արտահայտվել անվստահությունը:

18. Ձեր իրավունքները կարողացել եք ինքնուրույն՝ առանց փաստաբանի պաշտպանել (այո/ոչ):

19. Շարքային քաղաքացին ինքնուրույն՝ առանց փաստաբանի կարո՞ղ է պաշտպանել իր իրավունքները, թե՞ ոչ (այո/ոչ):

20. Վճարովի փաստաբանի ծառայությունի՞ց եք օգտվել, թե հանրային, թե ՀԿ-ի կողմից է տրամադրվել անվճար հիմունքներով:

21. Անհրաժեշտության դեպքում կրկին կդիմեի՞ք դատաիրավական համակարգին (այո/ոչ):

22. Ինչո՞ւ կդիմեիք կամ ինչո՞ւ չէիք դիմի:

23. Գործող օրենքները բավարա՞ր են Ձեր իրավուքները պաշտպանելու համար (այո/ոչ/մասամբ):

24. Ի՞նչ օրենքներ կցանկանայիք փոփոխել:

25. Վստահո՞ւմ եք դատաիրավական համակարգին (այո/ոչ/վերապահումներով):

26. Ինչո՞ւ:

27. Ձեր և մյուս կողմի իրավունքները հավասար են պաշտպանվում դատաիրավական համակարգի կողմից (այո/ոչ):

28. Պատժի մասին տեղեկատվություն (տուգանք/ազատազրկում/այլ):

29. Գործը (ընթացքի մեջ է/ ավարտված է):

30. Բողոքարկում (առկա է/առկա չէ):

31. Այլ հանգամանքներ:

Հարցման ամսաթիվ ---. ---. 2024 թ.

Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ՄԻԵԴ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա
ՄԱԿ՝ Միացյալ ազգերի կազմակերպություն
ԸԲ՝ ընտանեկան բռնություն